Community-led Urban Strategies in Historic Towns (COMUS)

COUNCIL OF EUROPE

Funded
by the European Union
and the Council of Europe

EUROPEAN UNION

CONSEIL DE L'EUROPE

Implemented
by the Council of Europe

**«Համայնքի կողմից իրականացվող քաղաքաշինական ռազմավարություններ պատմական քաղաքներում» (COMUS) ծրագիր**

# Գյումրի քաղաքի ելակետային պլան

Մարտ 2017թ.

# Բովանդակություն


Ներածական մաս ........ 4

Ծրագրի իրականացման գրասենյակ ........ 5

Տեղական շահառուների խումբ ........ 6

Գլուխ 1. Վերլուծություն ........ 7

1.1 Խնդիրների և մարտահրավերների նկարագրություն ըստ ոլորտների ........ 7

1.1.1 Գյումրի քաղաքի ազդեցության մակարդակը տարածքային (Շիրակի մարզ), վարչական և աշխարհագրական շրջանակներում ........ 7

1.1.2 Նախագծի սահմանված մակերեսի և քաղաքային գործառնական տարածքի միջև հարաբերությունները ........ 8

1.1.3 Ժառանգության դիրքը քաղաքաշինության զարգացման համատեքստում ........ 9

1.1.4 Քաղաքային և նախագծի համար սահմանված տարածքների գործառույթներ ........ 9

1.1.5 Բնակարանային ապահովում ........ 9

1.1.6 Միջամտության կարողություններ ........ 9

1.1.7 Բացահայտված հիմնախնդիրներ ........ 9

Գլուխ 2. Ընդհանուր տեսլական ........ 11

2.1. Ընդհանուր տեսլականի ստեղծումը ........ 11

2.2. Գյումրու տեսլականը ........ 11

2.3 Ընդհանուր տեսլականի նպատակները ........ 11

Գլուխ 3. Գործողություններ ........ 14

3.1 Գյումրի քաղաքի ելակետային պլանի գործողություն թիվ 1 ........ 15

3.2 Գյումրի քաղաքի ելակետային պլանի գործողություն թիվ 2 ........ 18

3.3 Գյումրի քաղաքի ելակետային պլանի գործողություն թիվ 3 ........ 21

3.4 Գյումրի քաղաքի ելակետային պլանի գործողություն թիվ 4 ........ 24

3.5 Գյումրի քաղաքի ելակետային պլանի գործողություն թիվ 5 ........ 27

3.6 Գյումրի քաղաքի ելակետային պլանի գործողություն թիվ 6 ........ 30

3.7 Գյումրի քաղաքի ելակետային պլանի գործողություն թիվ 7 ........ 33

3.8 Գյումրի քաղաքի ելակետային պլանի գործողություն թիվ 8 ........ 36

3.9 Գյումրի քաղաքի ելակետային պլանի գործողություն թիվ 9 ........ 39

3.10 Գյումրի քաղաքի ելակետային պլանի գործողություն թիվ 10 ........ 41

3. 11 Գյումրի քաղաքի ելակետային պլանի գործողություն թիվ 11 ........ 44

3. 12 Գյումրի քաղաքի ելակետային պլանի գործողություն թիվ 12 ........ 47

3. 13 Գյումրի քաղաքի ելակետային պլանի գործողություն թիվ 13 ........ 50

3.14 Գյումրի քաղաքի ելակետային պլանի գործողություն թիվ 14 ........ 53

3. 15 Գյումրի քաղաքի ելակետային պլանի գործողություն թիվ 15 ........ 56

3. 16 Գյումրի քաղաքի ելակետային պլանի գործողություն թիվ 16 ........ 59

3. 17 Գյումրի քաղաքի ելակետային պլանի գործողություն թիվ 17 ........ 62

**Փաստաթղթում օգտագործված հապավումների ցանկ**

| | |
|---|---|
| COMUS | Համայնքի կողմից իրականացվող քաղաքաշինական ռազմավարություններ պատմական քաղաքներում |
| ԵՄ | Եվրոպական միություն |
| ԵԽ | Եվրոպայի խորհուրդ |
| ԱՇԽ | Ազգային շահառուների խումբ |
| ՏՇԽ | Տեղական շահառուների խումբ |
| ԾԻԳ | Ծրագրի իրականացման գրասենյակ |

## Ներածական մաս

Ծրագրի պլանավորման փուլի առաջադրանքն է եղել Ելակետային պլանի թողարկումը: Ելակետային պլանը ռազմավարական ծրագիր է, որը մշակվել է համայնքապետարանի, Ազգային շահառուների խմբի (ԱՇԽ), ծրագրի իրականացման գրասենյակի (ԾԻԳ) և տեղական շահառուների խմբի (ՏՇԽ) համագործակցության արդյունքում: Այն կազմվել է եռաքայլ գործընթացի արդյունքում՝ վերլուծություն, ընդհանուր տեսլականի ստեղծում, համապատասխան գործողությունների որոշում: Գործընթացն իրագործելու նպատակով ՏՇԽ-ի կողմից իրականացվել են թվով ութ հանդիպում-քննարկումներ: Հանդիպում-քննարկումների համար ընտրվել են պատմական հուշարձան համարվող բնակելի և հասարակական շենքեր: Յուրաքանչյուր հանդիպման վերաբերյալ կազմվել են արձանագրություններ, որտեղ նշվել են ուշադրության արժանացած հիմնական կետերը և խնդիրները:

## Ծրագրի իրականացման գրասենյակ

Ծրագրի իրականացման գրասենյակը (ԾԻԳ) ստեղծվել է որպես կառավարման կոմիտե՝ ծրագրի գործունեությանը աջակցելու համար: ԾԻԳ-ը իրականացրել է Ելակետային պլանի մշակման աշխատանքների ուղղորդումն ու համակարգումը՝ տեղական մասնագետների և քաղաքի տեղական շահառու խմբերի հետ՝ սերտ փոխշփումների միջոցով: Պլանավորման փուլի մեկնարկի ժամանակահատվածում ԾԻԳ-ը աջակցել է ՏԾԽ ձևավորմանը: Այն օգնել է բացահայտել պիլոտային քաղաքի կարիքները, գիտելիքների կամ կարողությունների բացերը՝ աջակցելով տեղական փորձագիտական ներգրավվածությանը և արտաքին օգնությանը: ԾԻԳ-ը ստանձնել է հիմնական նպատակների նախագծի պատրաստման և գործողությունների ցանկի մշակման պատասխանատվությունը, որոնք հանդիսանում են Ելակետային պլանի բաղադրիչները: ԾԻԳ-ը պատասխանատու է նաև Ելակետային պլանը քաղաքային իշխանության կողմից վավերացման և ԱԾԽ-ի կողմից հաստատման գործընթացի համար: Դրա կազմի մեջ են մտնում.

1. Հովհաննես Սահակյան, ԾԻԳ-ի ղեկավար
   Գյումրու համայնքապետարանի քաղաքաշինության և ճարտարապետության բաժնի գլխավոր մասնագետ Էլ. հասցե՝ hovhannessahakyan@mail.ru

2. Աննա Մարտիրոսյան, ՏԾԽ համակարգող
   «Փոքրիկ Իշխան» սոցիալական կենտրոնի համակարգող
   Էլ. հասցե՝ anne.martirosyan@gmail.com

3. Աշոտ Միրզոյան, տեղական փորձագետ
   «Քաղաքային ուսումնասիրությունների կենտրոն» ՀԿ ղեկավար
   Էլ. հասցե՝ ashotmirzoyan@gmail.com

4. Գոհար Գրիգորյան, ազգային համակարգող
   ՀՀ մշակույթի նախարարության գլխավոր մասնագետ
   Էլ. հասցե՝ ggmincult@gmail.com

5. Սարհատ Պետրոսյան, ծրագրի ղեկավար
   Եվրոպայի խորհուրդ
   Էլ. հասցե՝ sarhat.petrosyan@coe.int

## Տեղական շահառուների խումբ

Տեղական շահառուների խումբը ստեղծվել է ծրագրի ղեկավարի կարողությունների քարտեզագրման և ազգային համակարգողի հետ իրականացված հարցումների ու հարցազրույցների միջոցով: Դրանց ամփոփման արդյունքում ձևավորվել է տեղական շահառուների խումբը (այսուհետ՝ ՏՇԽ), որը բաղկացած է 12 անդամներից. նրանցից երեքը Գյումրու համայնքապետարանի ներկայացուցիչներն են:

1. Հենրիկ Գասպարյան
   Գյումրու քաղաքապետարանի քաղաքաշինության և ճարտարապետության բաժնի պետի տեղակալ
2. Ստեփան Տեր-Մարգարյան
   «Կումայրի» պատմամշակութային արգելոց-թանգարանի գործադիր տնօրեն
3. Արմեն Հովհաննիսյան
   Գյումրու քաղաքապետարանի ծրագրերի, արտաքին կապերի և արարողակարգի բաժնի պետ
4. Վահան Թումասյան
   Քաղաքական մշակույթի և համաձայնությունների զարգացման «Շիրակ կենտրոն» ՀԿ նախագահ
5. Լևոն Բարսեղյան
   Ժուռնալիստների «Ասպարեզ» ակումբի ՀԿ խորհրդի նախագահ
6. Շանթ Կիրմիզյան
   «Գյումրի Հույս» ծրագրի գործադիր տնօրեն
7. Ալեքսան Տեր-Մինասյան
   «Բեռլին Արտ» հյուրանոցի գործադիր տնօրեն
8. Կարինե Մկրտչյան
   «Կանանց տիրույթ» ՀԿ նախագահ
9. Անտոնիո Մոլտալտո
   «Գյումրու ընկերներ» հիմնադրամի նախագահ
10. Արսեն Վարդանյան
    «Գյումրին մեր տունն է» քաղաքացիական երիտասարդական նախաձեռնության կազմակերպիչ
11. Արտաշես Բոյաջյան
    Շիրակի երկրագիտական թանգարանի աշխատակից
12. Մարինա Բազաևա
    «Կարիտաս» Գյումրու գրասենյակ
13. Ալեքսեյ Մանուկյան
    արվեստագետ

# Գլուխ 1. Վերլուծություն

## 1.1 Խնդիրների և մարտահրավերների նկարագրություն ըստ ոլորտների

Համաձայն Պլանավորման փուլի ուղեցույցի՝ վերլուծության իրականացման շրջանակում տեղի են ունեցել ՏԾԽ-ի հանդիպում-քննարկումներ: Վերլուծության ընթացքում ՏԾԽ-ի անդամները հիմնականում կենտրոնացել են քաղաքի համար մեծ նշանակություն ունեցող թեմաների վրա, հիմքում դնելով անշարժ և շարժական հուշարձաններով կազմավորված Գյումրու պատմամշակութային ժառանգության պահպանման և զարգացման հիմնախնդիրները:

Վերլուծության համար ուղենիշներ են հանդիսացել քաղաքի Գլխավոր հատակագիծի հիմնադրույթները, «Նախնական տեխնիկական փաթեթը» և համայնքապետարանի կողմից մշակված «Գյումրի քաղաքի զարգացման քառամյա ծրագիրը»:

Յուրաքանչյուր հանդիպման վերաբերյալ պատրաստվել են զեկույցներ, որտեղ նշվել են ուշադրության արժանացած հիմնական կետերն ու խնդիրները: Վերլուծության փուլում անցկացված 6 հանդիպումների թեմաներն են եղել:

**1.1.1** Գյումրի քաղաքի ազդեցության մակարդակը տարածքային (Շիրակի մարզ), վարչական և աշխարհագրական շրջանակներում

Գյումրին հանդիսանում է Շիրակի մարզի կենտրոնական քաղաքը: Բնակչության թվով Գյումրին Հայաստանի երկրորդ քաղաքն է մայրաքաղաք Երևանից հետո: Մարզում Գյումրուց բացի, գտնվում են Մարալիկ և Արթիկ քաղաքները: Գյումրի քաղաքը գտնվում է Երևան և Վանաձոր քաղաքներից համապատասխանաբար 120 կմ և 60 կմ հեռավորության վրա: Շիրակի մարզը գտնվում է Հայաստանի հյուսիս-արևմուտքում: Այն սահմանամերձ է Թուրքիայի Հանրապետությանը (Կարսի նահանգ) արևմուտքի կողմից և Վրաստանի Հանրապետության Սամցխե-Ջավախեթի նահանգին: Հյուսիսային կողմից Գյումրի և Կարս քաղաքների միջև մինչև 1990-ական թվականները գործել է երկաթուղի, որը ներկայումս չի գործում Թուրքիայի Հանրապետության կառավարության որոշմամբ: Գյումրին կապված է Վրաստանի հետ Երևան-Գյումրի-Թբիլիսի մայրուղով (անցակետ՝ Բավրա):

Գյումրի քաղաքով անցնող Երևան-Թբիլիսի-Մոսկվա երկաթուղին, որը գործել է մինչև 1990-ական թվականները, ներկայումս չի գործում վրաց-աբխազական կոնֆլիկտի հետևանքով:

Այժմ Գյումրու երկաթուղային կայանը սպասարկում են Երևան-Գյումրի և Երևան-Թբիլիսի երթուղիներով ընթացող մարդատար և բեռնատար գնացքները:

Այսպիսով, անմիջապես երկու պետական սահման ունեցող Շիրակի մարզը զրկված է միջպետական երկաթուղային և ավտոճանապարհային տարանցիկ կենտրոն լինելու իր առավելություններից: Գյումրու հեռանկարային զարգացման համար որոշակի հնարավորություն կստեղծվի «Հյուսիս - հարավ» միջպետական ավտոմայրուղու ճանապարհային միջանցքի դեպքում, քանի որ այդ պարագայում Իրան-Մեղրի-Գորիս-Երևան-Գյումրի-Վրաստանի սահմանային ավտոմայրուղին կանցնի Գյումրի քաղաքի վարչական տարածքի միջով:Գյումրու վարչական տարածքում է գտնվում «Շիրակ» օդանավակայանը, որը շահագործվող և տեխնիկական բավարար մակարդակ ունեցող միջազգային նշանակություն ունեցող օդանավակայան է:




Նկ.1.Կումայրի արգելոց-թանգարանի տեղադիրքը գլխավոր հատակագծի վրա

**1.1.2** Նախագծի սահմանված մակերեսի  և քաղաքային գործառնական տարածքի միջև հարաբերությունները

Գյումրի քաղաքի միջուկը հանդիսացող «Կումայրի» պատմաճարտարապետական արգելոց-թանգարանն իր մեջ ներառում է XIX-XX դարերում ստեղծված քաղաքային տիպի կառուցապատումը և Ախուրյան գետի ձախափնյա կիրճի լանդշաֆտը (բնապատկերը): Հենց այս պատճառով «Կումայրի» արգելոցի տարածքը և՛ գլխավոր հատակագծի, և՛ ՀՀ կառավարության կողմից ընդունված օրենքի համաձայն, հանդիսանում է հատուկ պահպանվող տարածք, որտեղ գործում է քաղաքաշինական գործունեության և կառուցապատման կարգավորման ու քաղաքաշինական սահմանափակումների համակարգ ունեցող հատուկ ռեժիմ:

Գյումրի քաղաքում գտնվող պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների հիմնական մասը գտնվում է «Կումայրի» արգելոցի պահպանման տարածքում, սակայն առանձին հուշարձանների կամ հուշարձանախմբերի տեսքով դրանք կան նաև  քաղաքի տարբեր հատվածներում: Դրանցից են Երկաթուղային դեպոյի, Պոլիգոնի, Սևերսկի և Կազաչի պոստի զորանոցները և այլ կառույցներ:

**1.1.3** Ժառանգության դիրքը քաղաքաշինության զարգացման համատեքստում

Գյումրին ունի բազմադարյա հարուստ պատմամշակութային ժառանգություն, որն արժևորվում է մի շարք հուշարձանների առկայությամբ: Վերջիններս կազմում է քաղաքի պատմական միջուկը՝ «Կումայրի» արգելոցը: Քաղաքաշինական զարգացման համատեքստում կարևոր բաղադրիչ է հանդիսանում քաղաքի պատմամշակութային ժառանգության պահպանությունն ու վերականգնումը, որը կարող է նպաստել քաղաքի ինքնատիպության, գրավչության, ինչպես նաև մարդկանց բարեկեցության բարձրացմանն ու նոր աշխատատեղերի ստեղծմանը:

**1.1.4** Քաղաքային և նախագծի համար սահմանված տարածքների գործառույթներ

«Կումայրի» արգելոցի տարածքը առանձնացված է որպես քաղաքի քաղաքաշինական գործունեության հատուկ կարգավորման գոտի և հանդիսանում է «COMUS» ծրագրի թիրախային տարածք: Արգելոցի տարածքում կառուցապատումն իրականացվում է ՀՀ կառավարության կողմից սահմանված կարգերով: «Կումայրի» արգելոցի տարածքը ավելի գրավիչ դարձնելու համար ձեռնարկվում են միջոցառումներ փողոցային ցանցի բարելավման, հանրային տարածքների հարմարավետության բարձրացման, տրանսպորտային հոսքերի կարգավորման ուղղությամբ:

**1.1.5** Բնակարանային ապահովում

«Կումայրի» արգելոցի տարածքում առկա կառույցների մեծամասնությունը սեփականության իրավունքով պատկանում է քաղաքացիներին և կազմակերպություններին, առկա են նաև պետությանը և համայնքին պատկանող կառույցներ: Հուշարձան-շենքերի գերակշիռ մասը գտնվում է ոչ բարվոք վիճակում: Նշված կառույցների պահպանության խնդիրը մեծ չափով պայմանավորված է դրանց սեփականատերերի տնտեսական հնարավորություններով: Սեփականատերերից շատերը ֆինանսապես ի վիճակի չեն ապահովել կառույցների պատշաճ պահպանումը: Կան նաև դեպքեր, երբ պատմական հուշարձանի նորոգման ընթացքում աղավաղվում են հուշարձան-շենքերի պատմաճարտարապետական հատկանիշները:

1.1.6 Միջամտության կարողություններ

Քաղաքի ֆինանսական ռեսուրսները բավարար չեն պատմական միջուկում առկա հիմնախնդիրները լուծելու համար: Այդ պատճառով տարվում են աշխատանքներ միջազգային կառույցների ֆինանսական միջոցների ներգրավման ուղղությամբ: Քաղաքում կա որակյալ մասնագիտացում ունեցող մարդկային ռեսուրս որը կարող է ներգրավվել այս գործընթացիում:

**1.1.7** Բացահայտված հիմնախնդիրներ

ՏԾԽ-ի համատեղ ընտրած վեց հիմնական թեմաների շուրջ կազմակերպվել են նպատակային կլոր սեղան քննարկումներ՝ օգտագործելով մտքային գրոհի եղանակը: Քննարկումների արդյունքում առանձնացվել են ներքոհիշյալ վեց հիմնախնդիրները.

1. քաղաքաշինական զարգացման համար անհրաժեշտ տարածական պլանավորման փաստաթղթերի առկայության, դրանց ամբողջականության և արդյունավետության,
2. Կումայրի արգելոցի տարածքում առկա հուշարձան-շենքերի ոչ բարվոք վիճակի և դրանք նորոգելու հնարավոր լուծումների դիտարկումը,
3. պատմական թաղամասերում փողոցների կահավորման և տրանսպորտի կարգավորման հետ կապված,
4. պատմական թաղամասերի վերակենդանացման տեսլականի բացակայության հետ կապված խնդիրները,
5. զբոսաշրջության համակարգի բացակայությունը, հատկապես տեղեկատվական կենտրոնի և այլ ենթակառուցվածքների պակասի, ինչպես նաև դրանից բխող զարգացման ծրագրերի ու նախաձեռնությունների բացակայության,
6. ընդհանուր օգտագործման և կանաչապատ տարածքների կառավարման և դրանք ըստ նպատակային նշանակության օգտագործման խնդիրներ:

**SWOT վերլուծություն**

SWOT վերլուծություն կազմվել է հանդիպումների ընթացքում բարձրացված խնդիրների հիման վրա և ներկայացնում է վերլուծության փուլում բացահայտված 6 առանցքային հիմնախնդիրները:

| **Ուժեղ կողմեր** | **Թույլ կողմեր** |
|---|---|
| ▪ Հարուստ պատմամշակութային ժառանգությունը<br>▪ Ռազմավարական աշխարհագրական դիրք՝ Վրաստանի և Թուրքիայի հետ պետական սահմանը և միջպետական ճանապարհների առկայությունը<br>▪ Մարդկային ինտելեկտուալ ռեսուրսը<br>▪ Լայն մշակութային կապերը | ▪ Սակավ բյուջետային միջոցներ<br>▪ Ներդրումների ցածր մակարդակը<br>▪ Վնասված հուշարձան-շենքեր<br>▪ Անբարեկարգ փողոցներ և մայթեր<br>▪ Ջրոսաշրջությանը սպասարկող ծառայությունների պակաս<br>▪ Ինտելեկտուալ ռեսուրսի ծերացում |
| **Հնարավորություններ** | **Վտանգներ** |
| ▪ Տուրիզմի զարգացումը<br>▪ Բարենպաստ միջավայրի ստեղծում ներդրողների համար<br>▪ Հանրային տարածքների բարեկարգում, հանգստի գոտիների կառուցում<br>▪ Բազմաթիվ միջազգային ու տարածաշրջանային ծրագրերում ներգրավվածություն | ▪ Եղանակային անբարենպաստ պայմաններ<br>▪ Տարածքի սեյսմիկ անկայունություն<br>▪ Միջազգային հարաբերությունների անկանխատեսելի փոփոխություններ<br>▪ Ինտելեկտուալ ռեսուրսի արտահոսք դեպի մայրաքաղաք և արտերկիր |

# Գլուխ 2. Ընդհանուր տեսլական

## 2.1. Ընդհանուր տեսլականի ստեղծումը

Ընդհանուր տեսլականի ստեղծման համար անցկացվել են ՏԾԽ-ի հանդիպում-քննարկումներ, որի նպատակն է եղել վերլուծության փուլում առաջարկված հիմնախնդիրների մեկնաբանումը: Մեր կողմից ստեղծված տեսլականում արտահայտված է երկարաժամկետ հեռանկարում քաղաքի զարգացումների վերաբերյալ մեր պատկերացումը: Տեսլականի քննարկման ընթացքում անդրադարձել ենք նաև Գյումրու քառամյա զարգացման պլանին, որի դրույթները նույնպես արտացոլված են տեսլականի մեջ:

Քննարկումների արդյունքում ձևակերպվեցին ընդհանուր տեսլականի 5 առանցքային խնդիրները:

## 2.2. Գյումրու տեսլականը

Գյումրու բնակիչները, համարելով իրենց անկրկնելի և բարձրարժեք քաղաքային մշակույթի, կենցաղի և ճարտարապետության ժառանգորդներ, կարևորում են քաղաքի պատմական միջավայրի պահպանման անհրաժեշտությունը, որպես քաղաքի հոգևոր և տնտեսական վերելքը իրականացնելու հզոր խթան:

## 2.3 Ընդհանուր տեսլականի նպատակները

Ընդհանուր տեսլականի հինգ նպատակները ձևակերպվել են՝ ելնելով վերլուծության փուլում բացահայտված վեց հիմնախնդիրների վերլուծությունների մեկնաբանությունից: Ձևակերպված հինգ նպատակներն են.

**Նպատակ 1. Վերականգնել քաղաքի նախկին դերակատարությունը՝ որպես տրանսպորտային, արդյունաբերական, մշակութային և սպորտային տարածաշրջանային կենտրոն:**

Գյումրին դինամիկ զարգացող և աշխույժ քաղաք է՝ հանդիսանալով տրանսպորտային, արդյունաբերական, մշակութային և սպորտային տարածաշրջանային կենտրոն: Ելնելով դրանից անհրաժեշտ է վերականգնել քաղաքի դերակատարությունը՝ որպես Հայաստանի մեծությամբ երկրորդ քաղաքի և վերաիմաստավորել է Գյումրու ներգրավումը Հայաստանի Հանրապետության տնտեսական, ժողովրդագրական և հոգևոր զարգացման ծրագրերում:

Հատկապես հաշվի առնելով այն հանգամանքը, որ քաղաքի ներկայիս կառուցապատումը հնարավորություն է տալիս երկարաժամկետ հեռանկարում քաղաքի բնակիչների քանակը հասցնել երեք հարյուր հազարի: Այդ նպատակը կարող է իրականանալ քաղաքին պատկանող ազատ տարածքների կառուցապատման շնորհիվ՝ առանց քաղաքի առկա սահմանների ընդլայնման:

**Նպատակ 2. «Կումայրի» արգելոցի տարածքում որակյալ քաղաքային միջավայրի ձևավորում կանոնակարգված, ակտիվ և հավասարակշռված տրանսպորտային և հաղորդակցության շարժունության, և առկա պատմական միջավայրի մատչելիությունը ապահովելու միջոցով:**

Տարանցիկ տրանսպորտային միջոցները պատմական կենտրոնից դուրս բերելու, քաղաքի փողոցային ցանցի առավել ծանրաբեռնված հատվածներում տրանսպորտային հոսքերի բեռնաթափման, ավտոկայանատեղերի ստեղծման շնորհիվ կարգավորվում են տրանսպորտային հոսքերը (Հաղթանակի պողոտա, Ջիվանու, Շահումյան, Սայաթ-Նովայի փողոցներ):

Դա կարող է բարելավել հանրային սպասարկման (առևտրի, հանրային սննդի սպասարկման, հուշանվերների արտադրության) օբյեկտների միջավայրը: Առաջնահերթ դա անհրաժեշտ է իրականացնել քաղաքային շուկայի

**Նպատակ 3. Պատմական միջուկի մի հատվածում ստեղծել թաղամաս (պիլոտային գոտի), որը պետք է օրինակ հանդիսանա «Կումայրի» արգելոցի ամբողջ տարածքի վերակառուցման համար:**

և հարակից թաղամասերում առևտրի օբյեկտների գործառական և գեղագիտական որակների բարձրացման շնորհիվ՝վերափոխելով և հարմարեցնելով նախկին Միկրոէլեկտրաշարժիչ գործարանի կառույցները:

Պիլոտային գոտում ներդաշնակորեն կարող են համատեղվել թե՛ բնակելի, թե՛ հասարակական գործառույթներ: Համաձայն ավանդական քաղաքային ապրելաձևի՝ այստեղ կառուցվել են տարբեր տիպի բնակելի շենքեր (տնամերձ հողամասով քաղաքային տիպի առանձնատներ, բազմաբնակարան շենքեր, կցաշար տներ, սպասարկման կամ արտադրական տարածքներ ունեցող բնակելի տներ և այլն) և

հասարակական նշանակություն ունեցող կառույցներ՝ հյուրանոցներ, կրթական, բուժական, վարչական, կենցաղ- սպասարկման, կառավարման, կրոնական, մշակութային և սպորտային հիմնարկություններ:

Վերաստեղծելով քաղաքի կառուցապատման այս ձևերը, երբ բնակելի և տնտեսական (արհեստանոց, արվեստանոց, վաճառասրահ, սննդի մատուցման կամ պատրաստման) գործառույթները համատեղված են մեկ կառույցի մեջ հնարավոր է ստեղծել առավել խորքային և կայուն կապ քաղաքի բնակիչների և բնակավայրի միջև:




Նկ.2.Կումայրի արգելոց-թանգարան

**Նպատակ 4. Քաղաքի ինքնության բացահայտում՝ հաշվի առնելով ավանդական արհեստների, հումորի, առկա մշակութային կառույցների (թանգարաններ, երաժշտական դպրոցներ և այլն), խորհրդային անցյալի, հետերկրաշարժային իրադրության և փակ սահմանի առկայությունը:**

Քաղաքի և քաղաքացիների նոր ինքնությունների ձևափոխման, պահպանման կամ զարգացման հարցերը դառնում են ինչպես գիտական և ակադեմիական, այնպես էլ լայն հասարակության համար վերլուծության, քննարկման և բացահայտումների առիթներ և հիմք են ծառայում տարածական (քաղաքային ) պլանավորումների համար:

Քաղաքային հանրությունը հետաքրքրվում, բացահայտություններ և հետևություններ է անում քաղաքի ինքնությունը որպես պատմականորեն զարգացող (Կումայրի-Գյումրի-Ալեքպոլ-Լենինական-Կումայրի-Գյումրի) և փոխակերպվող երևույթի: Վերջինիս շնորհիվ քաղաքի հանրությունը և անհատները

կարողանում են ավելի հարմոնիկ, հավասարակշռված դիրքորոշումներ ստանալ քաղաքի և նրա կերպարի վերաբերյալ: Շնորհիվ իրատեսական և ռացիոնալ ինքնաճանաչման նրանք կարողանում են ավելի հեշտությամբ և արդյունավետ ներկայանալ տարածաշրջանի (Կովկասի, Եվրասիական և համաշխարհային) տիրույթներում:

Կարգավորվում են քաղաքի բնակչության ժողովրդագրական կազմի և աշխատանքային զբաղվածության նեգատիվ օրինաչափությունները: Օրինակ՝ դադարում է Հայաստանի այլ վայրերում ապրող սոցիալապես անապահով խավի ներհոսքը դեպի Գյումրի, դադարում է աշխատունակ, երիտասարդ բնակչության արտահոսքը քաղաքից և այլն:

Քաղաքը, որպես երկարատև բնակության և աշխատանքի համար հարմար վայր, ընտրում են թվային և հեռահաղորդակցման տեխնոլոգիաների և արվեստի ոլորտում աշխատող մասնագետները՝ քաղաքային ժամանակի «հատուկ» զգացողության և բնակլիմայական պայմանների (երկարատև արև, անապակ ջուր, մաքուր օդ) համար:

Քաղաքին բնորոշ ավանդական հատկանիշները, որոնցով հպարտանում են թե՛ քաղաքի բնակչությունը, և թե՛ հայաստանցիները, զարգանում են և ստանում իրենց մարմնավորումները քաղաքի կառույցներում և բաց տարածքներում: Դրանցից են հումորը, հյուրասիրությունը, պարծենկոտությունը, ավանդապաշտությունը և այլ «տիպիկ» նկարագրեր:

Մշակութային հաստատությունները դառնում են քաղաքային մշակույթի, պատմության և հոգևոր կերտվածքի կայացման, բազմացման, տարածման և զարգացման կենտրոններ: Շիրակի երկրագիտական թանգարանը, տեղափոխվելով մասնագիտացված շենք, կարողանում է ամբողջապես ցուցադրել տարածաշրջանի բազմադարյան պատմությունը, վերաստեղծվում է երկրաշարժի պատճառով կորսված պատկերասրահի շենքը: Այս հաստատությունները դառնում են ինտերակտիվ, նորոգվում են ցուցանմուշները մի շարք արվեստի և հուշաթանգարաններում (Մ. Մկրտչյան, Ասլամազյան քույրերի, ժողովրդական ճարտարապետության և կենցաղի թանգարաններ): Ստեղծվում են նոր թանգարաններ, այդ թվում՝ Գուրջիևի, Քաղաքային հիշողության թանգարանները և այլն:

Կայանում են այլընտրանքային թանգարանները՝ թվային մեդիայի օգտագործմամբ քաղաքի թանգարան, «Դոմիկ» թանգարան, որը պատմում է երկրաշարժի հետևանքով «կոնտեյներներում» ապրած մի սերնդի կյանքի և կենցաղի մասին:

**Խնդիր 5. Քաղաքում առկա գետերի մաքրում և ինտեգրում քաղաքի կանաչապատման համակարգին՝ օգտագործելով նորարարական քաղաքաշինական և բնապահպանական մոտեցումները:**

Քաղաքում իրականացվում են համալիր միջոլոտային ծրագրեր՝ քաղաքային զարգացում, հասարակական վայրերի խթանում, կանաչ գոտիների և ջրային մակերեսների ավելացում, պատմական հուշարձան հանդիսացող տեխնիկական կառույցների վերականգնում, տարածքների քաղաքաշինական (սանացիա): Այս ծրագրերի շնորհիվ քաղաքը դառնում է ավելի գրավիչ, ավելանում են բնակչության հանգստի գոտիները, մաքրվում են աղտոտված գետերի հուները:

# Գլուխ 3. Գործողություններ

ՏՇԽ-ի հանդիպումների ընթացքում քննարկվել են ինչպես քաղաքային զարգացման հետ կապված սկզբունքային ռազմավարություններ, այնպես էլ կոնկրետ գործողություններ: Քննարկվել են 40-ից ավելի տարբեր բնույթի գործողություններ: Այդ գործողություններից առանձնացվել են նրանք, որոնք դիտարկվել են որպես տեսլականի խնդիրների իրականացմանը տանող քայլեր: Վերջիններից՝ թվով 17-ը ներառված է տվյալ փաստաթղթի մեջ: Առաջարկվող գործողությունները կապված են տեսլականի 5 նպատակների հետ, որը ներկայացված է ստորև աղյուսակի տեսքով:

Նպատակ 1. Վերականգնվում է քաղաքի նախկին դերակատարությունը՝ որպես տրանսպորտային, արդյունաբերական, մշակութային և սպորտային տարածաշրջանային կենտրոն:

Նպատակ 2. «Կումայրի» արգելոցի տարածքում որակյալ քաղաքային միջավայրի ձևավորում կանոնակարգված, ակտիվ և հավասարակշռված տրանսպորտային և հաղորդակցության շարժունության, և առկա պատմական միջավայրի մատչելիությունը ապահովելու միջոցով:

Նպատակ 3. Պատմական միջուկի մի հատվածում հաջողվել է ստեղծել թաղամաս, պիլոտային գոտի, որը պետք է օրինակ հանդիսանա «Կումայրի» արգելոցի ամբողջ տարածքի վերակառուցման համար:

Նպատակ 4. Քաղաքի ինքնության բացահայտում՝ հաշվի առնելով ավանդական արհեստների, հումորի, առկա մշակութային կառույցների (թանգարաններ, երաժշտական դպրոցներ և այլն), խորհրդային անցյալի, հետերկրաշարժային իրադրության և փակ սահմանի առկայությունը:

Խնդիր 5. Քաղաքում առկա գետերի մաքրում և ինտեգրում քաղաքի կանաչապատման համակարգին՝ օգտագործելով նորարարական քաղաքաշինական և բնապահպանական մոտեցումները:

Ընտրված գործողությունները մանրամասն ներկայացված են աղյուսակների միջոցով:

| | **Գործողությունների անվանումներ** | Նպատակ 1 | Նպատակ 2 | Նպատակ 3 | Նպատակ 4 | Նպատակ5 |
|---|---|---|---|---|---|---|
| 1 | Վարպետաց փողոցի (Ռուսթավելու-Գորկու փողոցների հատված) պատմամշակութային միջավայրի կարգավորում | | ■ | ■ | | |
| 2 | Շիրազի թանգարանի և Իտալական հյուպատոսարանի տարածքների համալիր զարգացում | | ■ | ■ | ■ | |
| 3 | Շիրազի հուշաթանգարանի շենքի վերակառուցում | ■ | ■ | ■ | ■ | |
| 4 | Ռուսթավելու փողոց 30 և 30ա հասցեում հուշարձանի վերակառուցում և միջավայրի կարգավորում | | ■ | ■ | | |
| 5 | Գորկի-Աբովյան-Ռուսթավելի-Վարպետաց փողոցներով սահմանափակված թաղամասի քաղաքաշինական վերակառուցում | | ■ | ■ | ■ | |
| 6 | Իսահակյան պուրակի փողոցի վերակառուցում | | | | | ■ |
| 7 | Շիրազի 17 հասցեում պատմաճարտարապետական հուշարձանի նորոգում և հարմարեցում՝ որպես արվեստագետների կացարան | | ■ | ■ | ■ | |
| 8 | Չաղթանակի պողոտայի պուրակի վերակառուցում | | | | | ■ |
| 9 | «Լիճ» հանգստի գոտի | | ■ | | | ■ |
| 10 | «Կաբարդինկա» պատմական թաղամասի զարգացում | | ■ | ■ | ■ | |
| 11 | «Մայր Չայաստան-Սև բերդ» ռեկրեացիոն գոտու զարգացում | | ■ | ■ | ■ | ■ |
| 12 | Գյումրի գետակի ստորգետնյա կոլեկտորի վերակառուցում | | | | | ■ |
| 13 | Գյումրու ճարտարապետության ուսումնասիրության կենտրոնի (ճարտարապետության թանգարան-ինստիտուտ) հիմնում | ■ | | | ■ | |
| 14 | Ս. Մերկուրովի տուն-թանգարանի և ժողովրդական ճարտարապետության և քաղաքային կենցաղի թանգարանի տեխնիկական վերազինում և տարածքի դրենաժացում | ■ | ■ | ■ | ■ | |
| 15 | «Գրքերի տուն» հասարակական տարածքի զարգացում | | ■ | ■ | ■ | |
| 16 | Գորկու 22 հասցեում բնակելի տան ներքին բակի և բակային ճակատների վերակառուցում | | ■ | ■ | | |
| 17 | Վարդանանց հրապարակի կանաչապատման և փողոցային լուսավորության արդիականացում | | ■ | | | ■ |

## 3.1 Գյումրի քաղաքի ելակետային պլանի գործողություն թիվ 1

Գործողության անվանումը՝

Վարպետաց փողոցի (Ռուսթավելի-Գորկու փողոցների հատված) պատմամշակութային միջավայրի կարգավորում:

| | |
|---|---|
|  |  |
| Նկ.3. Տեղադիրքը (սև եզրագիծ) | Նկ.4. Վարպետաց փողոց (ընդհանուր տեսարան) |

| | |
|---|---|
| **Հիմնական նկարագիրը՝**<br>Նախատեսվում է Վարպետաց փողոցի միջավայրի գեղագիտական և պատմական նկարագրի վերականգնում, փողոցի ծածկույթի վերակառուցում և ինժեներական ցանցերի արդիականացում: | |
| **Համառոտ նկարագիրը** | Փողոցային լուսավորության արդիականացում, էլեկտրական մալուխների և գազատար գծերի կարգավորում, կառույցների ճակատների, տանիքների նորոգում և վերակառուցում, պարիսպների, դարպասների նորոգում, վերականգնում և տեղադրում, փողոցի երթևեկելի մասի և մայթերի վերակառուցում, նշանային համակարգի և փողոցային դիզայնի զարգացում, այլ աշխատանքներ: |
| **Գործողության ուղՅղվածությունը** | Վարպետաց փողոցի երկայնքով տեղադրված պատմական հուշարձանների խաթարված արտաքին տեսք, վերջին տարիներին իրականացված ցածրորակ լրակառույցներ, պարիսպների, մուտքերի և դարպասների բազմազանության, միջավայրի գունային խայտաբղետության կարգավորում, անկանոն անցկացրած տարաբնույթ ինժեներական գծեր, փողոցի երթևեկելի մասի և մայթերի ծածկույթի խարխլված վիճակ, այլ խնդիրներ: |
| **Ընդհանուր տեսլականի նպատակ** | 3. Պատմական միջուկի մի հատվածում հաջողվել է ստեղծել թաղամաս, որը պետք է օրինակ հանդիսանա Կումայրու ամբողջ տարածքի վերակառուցման համար: |

| |
|---|
| **Գործողությունների գործընթացների մանրամասները: Նպատակների և ծրագրերի մեկնաբանություն** |

| | |
|---|---|
| Նպատակը | Վարպետաց փողոցի, ենթակառուցվածքների, և փողոցին հարող հուշարձան-շենքերի վերականգնում՝ դարձնելով այն ցուցադրական փողոց զբոսաշրջիկների համար, ինչն օրինակ կծառայի արգելոցի մյուս հատվածների վերականգնման համար: |
| Ժամկետները, առաջնահերթությունը և վտանգը | Շտապ Կարճաժամկետ Միջնաժամկետ Երկարաժամկետ<br>☐ ■ ☐ ☐<br>▪ **Ժամանակաշրջան: 2016 –2019** թթ.<br>▪ **Վտանգ:** Կառույցների անհատ սեփականատերերի հետ իրավական կարգավորումների գործող մեխանիզմների անկատարություն: |
| **Հիմնական կատարողներ** | |
| Ներգրավված հիմնական կատարողներ | Գյումրու համայնքապետարան, անհատ սեփականատերեր, ՀՀ մշակույթի նախարարություն |
| Մասնակցություն | Բնակիչներ, քաղաքացիական հասարակություն, տեղական ինքնակառավարման մարմինների մասնակիցներ, ակտիվ խմբեր: |
| **Ֆինանսավորման աղբյուրները** | |
| Գնահատել ընդհանուր արժեքը և ֆինանսավորման աղբյուրները | |
| **Ակնկալվող արդյունքները** | |
| Արդյունքներ և ազդեցություն | Արգելոցի տարածքում վերականգնված օրինակելի տարածք (փողոց), որը կխթանի զբոսաշրջությանը և օրինակ կծառայի մնացած փողոցների վերականգնման համար: |
| **Տեղեկատվական աղբյուրները** | |
| Տնօրինող կազմակերպություն(ներ) | Գյումրու համայնքապետարան |
| Տնօրինող կազմակերպություն(ներ)ի կոնտակտային տվյալներ | Հովհաննես Սահակյան, Աշոտ Միրզոյան, Ստեփան Տեր-Մարգարյան |
| Այլ փաստաթղթային աղբյուրներ | |

| Լրացուցիչ նկարներ | |
|---|---|
|  |  |
|  |  |
|  | |

## 3.2 Գյումրի քաղաքի ելակետային պլանի գործողություն թիվ 2

Գործողության անվանումը՝

Շիրազի թանգարանի և Իտալական հյուրանոցի տարածքների համալիր զարգացում






| | |
|---|---|
| **Հիմնական նկարագիրը՝**<br>Նախատեսվում է կազմակերպել երկու կառույցները իրար հետ կապող հետիոտնային ուղի, որը կձևավորի հուշարձանների դիտարկման նոր պատկերներ՝ տարածքին հաղորդելով լրացուցիչ շարժունակություն: | |
| **Համառոտ նկարագիրը** | Հովհաննես<br>Շիրազի հուշ-թանգարանը և Իտալիայի Հանրապետության հյուրանոցը գտնվում են կողք կողքի և զբաղեցնում են թաղամասի (Վարպետաց փողոց-Ռուսթավելու 2-րդ նրբանցք-Գորկու փողոց) մի հատվածը: Դրանցից յուրաքանչյուրը ունի առանձնացված մուտք և տարածքների օգտագործման փակուղային սկզբունք: Նախատեսվում է կատարել տարածքների վերափոխում այնպես, որ ստեղծվի դրանք միմյանց հետ կապող նոր հետիոտնային ուղի: |
| **Գործողության ուղղվածությունը** | Երկու պատմական հուշարձանները գտնվելով կողք կողքի որևէ ձևով կապված չեն միմյանց հետ և չեն ստեղծում միասնական ձևով դիտարկվող քաղաքաշինական միջավայր: |
| **Ընդհանուր տեսլականի նպատակ** | Քաղաքի ինքնության բացահայտում հաշվի առնելով ավանդական արհեստների, հումորի, առկա մշակութային կառույցների (թանգարաններ, երաժշտական դպրոցներ և այլն), խորհրդային անցյալի, հետերկրաշարժային իրադրության և փակ սահմանի առկայությունը: |

**Գործողությունների գործընթացների մանրամասները: Նպատակների և ծրագրերի մեկնաբանություն**

| | |
|---|---|
| Նպատակը | Պատմականորեն ձևավորված թաղամասի քաղաքաշինական միջավայրի հարստացում նոր դիտակետերի ստեղծման միջոցով: Տարածության շարժունության բարձրացում նոր հետիոտնային ուղի ստեղծելու շնորհիվ: |
| Ժամկետները, առաջնահերթությունը և վտանգը | Շտապ ☐ Կարճաժամկետ ■ Միջնաժամկետ ☐ Երկարաժամկետ ☐<br>• **Ժամանակաշրջան: 2016 –2019 թթ**.<br>• **Վտանգ:** Ֆինանսական միջոցների պակաս:<br>• Կառույցների սեփականատերերի միջև պատմական հուշարձանի զարգացման և օգտագործման ընդհանուր փոխհամաձայնեցված տեսլականի ստեղծման դժվարություն: |
| **Հիմնական կատարողներ** | |
| Ներգրաված հիմնական կատարողներ | Գյումրու համայնքապետարան, ՀՀ մշակույթի նախարարություն,<br>«Գյումրու ընկերներ» հիմնադրամ |
| Մասնակցություն | Բնակիչներ, քաղաքացիական հասարակություն, տեղական ինքնակառավարման մարմինների մասնակիցներ, ակտիվ խմբեր |
| **Ֆինանսավորման աղբյուրները** | |
| Գնահատել ընդհանուր արժեքը և ֆինանսավորման աղբյուրները | |
| **Ակնկալվող արդյունքները** | |
| Արդյունքներ և ազդեցություն | Նոր դիտակետերի ստեղծման միջոցով պատմականորեն ձևավորված թաղամասի քաղաքաշինական միջավայրի հարստացում և տարածության շարժունության բարձրացում: |
| **Տեղեկատվական աղբյուրները** | |
| Տնօրինող կազմակերպություն(ներ) | Գյումրու համայնքապետարան |
| Տնօրինող կազմակերպություն(ներ)ի կոնտակտային տվյալներ | Հովհաննես Սահակյան, Աշոտ Միրզոյան, Ստեփան Տեր-Մարգարյան |
| Այլ փաստաթղթային աղբյուրներ | Անտոնիո Մոնտալտո |

| | |
|---|---|
| **Լրացուցիչ նկարներ** | |






## 3.3 Գյումրի քաղաքի ելակետային պլանի գործողություն թիվ 3

Գործողության անվանումը՝

Շիրազի հուշ-թանգարանի շենքի վերակառուցում






| **Հիմնական նկարագիրը՝**<br>Նախատեսվում է կարգավորել կառույցի տեխնիկական վիճակը, նորացնել և արդիականացնել թանգարանի գործառույթները, բարելավել թանգարանի արտաքին միջավայրը: | |
|---|---|
| **Համառոտ նկարագիրը** | Կառույցի պատերի և հիմքերի խոնավության կարգավորումն անհրաժեշտ է իրականացնել դրենաժային համակարգի ստեղծման միջոցով: Թանգարանի գործունեության աշխուժացում և տուրիստական գրավչության բարձրացում, ցուցադրության վերակազմակերպում, թանգարանում գործող կավագործության արվեստանոցի նորացում, ազգային խոհանոցի նմուշներ տեղում պատրաստելու և մատուցելու հնարավորության ստեղծում, բակի բարեկարգում և անհրաժեշտ կանաչապատման համակարգի ներդրում: |
| **Գործողության ուղղվածությունը** | Կառույցի հիմքերի և պատերի գերխոնավացում, ներքին տարածքներում ոչ նորմատիվային օդային ռեժիմի պատճառով նյութերի քայքայում, ցուցադրության արդիականացում, թանգա-րանի գործառույթների խիստ անբավարարություն, թանգարանին հարող տարածքներում և բակերում անբավարար բարեկարգում, կանաչապատման և գիշերային լուսավորության համակարգերի անբավարար վիճակ: |
| **Ընդհանուր տեսլականի նպատակ** | Քաղաքի ինքնության բացահայտում՝ հաշվի առնելով ավանդա-կան արհեստների, հումորի, առկա մշակութային կառույցների (թանգարաններ, երաժշտական դպրոցներ և այլն), խորհրդային անցյալի, հետերկրաշարժային իրադրության և փակ սահմանի առկայությունը: |

| **Գործողությունների գործընթացների մանրամասները: Նպատակների և ծրագրերի մեկնաբանություն** | |
|---|---|
| Նպատակը | Ինժեներական, ճարտարապետական, բարեկարգման և ցուցադրման խնդիրների կարգավորման միջոցով ապահովել Շիրազի հուշաթանգարանի նոր, արժևորված որակներ՝ որպես մշակութային կարևոր օբյեկտ: |

| | |
|---|---|
| Ժամկետները, առաջնահերթությունը և վտանգը | Շտապ Կարճաժամկետ Միջնաժամկետ Երկարաժամկետ<br>☐ ■ ☐ ☐<br>• **Ժամանակաշրջան: 2016 –2019 թթ**. |
| **Հիմնական կատարողներ** | |
| Ներգրաված հիմնական կատարողներ | Գյումրու համայնքապետարան<br>ՀՀ մշակույթի նախարարություն |
| Մասնակցություն | Բնակիչներ, քաղաքացիական հասարակություն, տեղական ինքնակառավարման մարմինների մասնակիցներ, ակտիվ խմբեր |
| **Ֆինանսավորման աղբյուրները** | |
| Գնահատել ընդհանուր արժեքը և ֆինանսավորման աղբյուրները | |
| **Ակնկալվող արդյունքները** | |
| Արդյունքներ և ազդեցություն | Ինժեներական տեխնոլոգիաների կիրառման շնորհիվ կառույցի քայքայման կանխում և շահագործման ժամկետի երկարացում: Թանգարանի գործունեության աշխուժացում և տուրիստական գրավչության բարձրացում: |
| **Տեղեկատվական աղբյուրները** | |
| Տնօրինող կազմակերպություն(ներ) | Գյումրու համայնքապետարան |
| Տնօրինող կազմակերպություն(ներ)ի կոնտակտային տվյալներ | Հովհաննես Սահակյան, Աշոտ Միրզոյան, Ստեփան Տեր-Մարգարյան |
| Այլ փաստաթղթային աղբյուրներ | «Հովհաննես Շիրազի հուշատուն-թանգարան» ՀՈԱԿ |

**Լրացուցիչ նկարներ**





| | |
|---|---|
|  |  |
|  |  |

## 3.4 Գյումրի քաղաքի ելակետային պլանի գործողություն թիվ 4

Գործողության անվանումը՝

Ռուսթավելու փողոց 30 և 30ա հասցեում պատմաճարտարապետական հուշարձանի շուրջը պատմականորեն ձևավորված միջավայրի կարգավորում, դրանում տեղակայված հուշաթանգարանի զարգացում և տեխնիկական վիճակի բարելավում






| | |
|---|---|
| **Հիմնական նկարագիրը՝**<br>Նախատեսվում է ստեղծել երկու տարբեր սեփականատերերի կողմից օգտագործվող պատմական հուշարձանի համալիր զարգացման ծրագիր: Հուշարձանի մի մասում տեղակայված Ֆրունզիկ Մկրտչյանի հուշ-թանգարանը վերակառուցվում է, դրա տեխնիկական վիճակը կարգավորվում է: Այն ձեռք է բերում նոր գործառույթներ՝ ստանալով ակտիվ դերակատարում քաղաքի մշակութային կյանքում: | |
| **Համառոտ նկարագիրը** | Հուշարձանի պահպանման միասնական ծրագրի իրականացում, այդ թվում՝ հուշարձանում տեղակայված երկու տարբեր հաստատությունների գործառույթների կանոնակարգում և օգտագործման ու պահպանման համատեղման պայմանների ստեղծում: Հուշարձանին հարող տարածքի կառուցապատման քաղաքաշինական կարգավորում: «Ֆրունզիկ Մկրտչյանի հուշ-թանգարան» հատվածի տեխնիկական վիճակի կայունացում: Թանգարանի ցուցադրության սկզբունքի վերափոխում և նոր գործառույթների համար պայմանների ստեղծում: Թանգարանի արտաքին մասի նշանային և դիզայներական լուծումների զարգացում: |
| **Գործողության ուղղվածությունը** | Հուշարձանը կառուցվել է որպես բնակելի տուն: Նրանում տեղակայված են «Մշակույթի կենտրոն» և «Ֆրունզիկ Մկրտչյանի հուշաթանգարան» կազմակերպությունները: Այս երկու կազմակերպություններից «Մշակույթի կենտրոնը» հիմնադրամի սեփականությունն է, իսկ «Ֆրունզիկ Մկրտչյան հուշ-թանգարանը»՝ համայնքային սեփականություն:<br>Հուշարձանի պատշաճ ձևով պահպանումը և օգտագործումը իրականացնելու համար անհրաժեշտ է կազմել երկու տարբեր սեփականատերերին պատկանող կառույցների համատեղ քաղաքաշինական ծրագիր:<br>«Ֆրունզիկ Մկրտչյանի հուշաթ-նգարանի» հատվածում կա հիմքերի և պատերի գերխոնավացման խնդիր: Թանգարանի էքսպոզիցիան գրավիչ չէ և հնաոճ է: |

| | |
|---|---|
| | |
| **Ընդհանուր տեսլականի նպատակ** | Քաղաքի ինքնության բացահայտում՝ հաշվի առնելով ավանդական արհեստների, հումորի, առկա մշակութային ենթակառուցվածքների (թանգարաններ, երաժշտական դպրոցներ և այլն), ժամանակակից արվեստի, խորհրդային անցյալի, հետ-երկրաշարժային իրադրության և փակ սահմանի առկայությունը: |

| **Գործողությունների գործընթացների մանրամասները: Նպատակների և ծրագրերի մեկնաբանություն** | |
|---|---|
| Նպատակը | Իրականացնել պատմական հուշարձան հանդիսացող կառույցի համալիր զարգացման ծրագիր ստանալով առավելագույն արդյունք քաղաքաշինական և ճարտարապետական վերականգնման գործընթացների համակարգման շնորհիվ: |
| Ժամկետները, առաջնահերթությունը և վտանգը | Շտապ ☐ Կարճաժամկետ ■ Միջնաժամկետ ☐ Երկարաժամկետ ☐<br>• **Ժամանակաշրջան: 2016 –2019 թթ.**<br>• **Վտանգ:** Կառույցների սեփականատերերի միջև իրավական կարգավորումներ: |
| **Հիմնական կատարողներ** | |
| Ներգրաված հիմնական կատարողներ | Գյումրու համայնքապետարան,<br>ՀՀ մշակույթի նախարարություն,<br>«Գյումրու ընկերներ» հիմնադրամ |
| Մասնակցություն | Բնակիչներ, քաղաքացիական հասարակություն, տեղական ինքնակառավարման մարմինների մասնակիցներ, ակտիվ խմբեր |
| **Ֆինանսավորման աղբյուրները** | |
| Գնահատել ընդհանուր արժեքը և ֆինանսավորման աղբյուրները | |
| **Ակնկալվող արդյունքները** | |
| Արդյունքներ և ազդեցություն | Պատմական հուշարձան հանդիսացող կառույցի զարգացման համալիր ծրագրի միջոցով ստանալ քաղաքաշինական և ճարտարապետական վերականգնման ենթարկված կառույց, որը օրինակ կծառայի արգելոցի տարածքում գոյություն ունեցող նմանատիպ մյուս հուշարձան-շենքերի վերակառուցման համար: Թանգարանի գործունեության աշխուժացում և տուրիստական գրավչության բարձրացում: |
| **Տեղեկատվական աղբյուրները** | |
| Տնօրինող կազմակերպություն(ներ) | Գյումրու համայնքապետարան |
| Տնօրինող կազմակերպություն(ներ)ի կոնտակտային տվյալներ | Հովհաննես Սահակյան, Աշոտ Միրզոյան, Ստեփան Տեր-Մարգարյան |
| Այլ փաստաթղթային աղբյուրներ | Անտոնիո Մոնտալտո |

| Լրացուցիչ նկարներ | |
|---|---|
|  |  |
|  |  |

## 3.5 Գյումրի քաղաքի ելակետային պլանի գործողություն թիվ 5

Գործողության անվանումը՝

Գորկի-Աբովյան-Ռուսթավելի-Վարպետաց փողոցներով սահմանափակված թաղամասի քաղաքաշինական վերակառուցման ծրագիր






| **Հիմնական նկարագիրը՝** Նախատեսվում է իրականացնել տարածքի համալիր ծրագիր, որը ենթադրում է քաղաքաշինական, էկոլոգիական և ինժեներական հիմնախնդիրների կարգավորման և պատմական կերպարի վերականգնման գործողություններ: | |
|---|---|
| **Համառոտ նկարագիրը** | Թաղամասի կառուցապատման կարգավորում, քաղաքաշինական սանացիա, տրանսպորտային ուղիների կարգավորում, «Գյումրի-չայ» գետակի կոլեկտորի վերակառուցում, աղբի հավաքման հարթակի արդիականացում, միջավայրի պատմաճարտարապետական և գեղագիտական որակների բարձրացում: |
| **Գործողության ուղղվածությունը** | Թաղամասի անկանոն կառուցապատման պատճառով խաթարված քաղաքաշինական միջավայր, վերջին տարիներին հանրային հատվածի հաշվին տեղադրված բազմաթիվ մասնավոր լրակառույցներ, լքված և կիսաքանդ շինություններ, ներքին փողոցային ցանցի անբավարար վիճակ, «Գյումրի չայ» գետակի կոլեկտորի անմխիթար վիճակ, գրունտային ջրերի ոչ բնական բարձր մակարդակ, խեղաթյուրված քաղաքային միջավայր: |
| **Ընդհանուր տեսլականի նպատակ** | Պատմական միջուկի մի հատվածում հաջողվել է ստեղծել թաղամաս, որը պետք է օրինակ հանդիսանա Կումայրու ամբողջ տարածքի վերակառուցման համար |

| **Գործողությունների գործընթացների մանրամասները: Նպատակների և ծրագրերի մեկնաբանություն** | |
|---|---|
| Նպատակը | Քաղաքաշինական, ճարտարապետական, ինժեներական, բնապահպանական, քաղաքային դիզայնի համալիր միջոցառումների կենտրոնացված ծրագրերի կիրառման շնորհիվ ապահովել քաղաքի մեկ ամբողջական թաղամասի բնակեցման, այցելության, գեղագիտական ընկալման և այլ նկարագրերը: |

| | |
|---|---|
| Ժամկետները, առաջնահերթությունը և վտանգը | **Շտապ Կարճաժամկետ Միջնաժամկետ Երկարաժամկետ**<br>☐ ■ ☐ ☐<br>• **Ժամանակաշրջան: 2016 –2019 թթ.** |
| **Հիմնական կատարողներ** | |
| Ներգրաված հիմնական կատարողներ | Գյումրու համայնքապետարան,<br>ՀՀ մշակույթի նախարարություն |
| Մասնակցություն | Բնակիչներ, քաղաքացիական հասարակություն, տեղական ինքնակառավարման մարմինների մասնակցություն, ակտիվ խմբեր |
| **Ֆինանսավորման աղբյուրները** | |
| Գնահատել ընդհանուր արժեքը և ֆինանսավորման աղբյուրները | |
| **Ակնկալվող արդյունքները** | |
| Արդյունքներ և ազդեցություն | Շնորհիվ բազմակողմանի և համակարգված միջոցառումների մեկ ամբողջական քաղաքաշինական միավորի (կվարտալի)՝ զգալի և տեսանելի տեսքի և որակի կտրուկ զարգացում, որը կնպաստի քաղաքի հետագա զարգացման հեռանկարին: |
| **Տեղեկատվական աղբյուրները** | |
| Տնօրինող կազմակերպություն(ներ) | Գյումրու համայնքապետարան |
| Տնօրինող կազմակերպություն(ներ)ի կոնտակտային տվյալներ | Հովհաննես Սահակյան, Աշոտ Միրզոյան, Ստեփան Տեր-Մարգարյան |
| Այլ փաստաթղթային աղբյուրներ | |

| **Լրացուցիչ նկարներ** | |
|---|---|
|  |  |





### 3.6 Գյումրի քաղաքի ելակետային պլանի գործողություն թիվ 6

Գործողության անվանումը՝

Իսահակյան պուրակի փողոցի վերակառուցում






| Հիմնական նկարագիրը՝<br>Վերակառուցել պուրակի ջրային և կանաչ մակերեսները՝ նորացված և բարելավված պուրակային միջավայր ստեղծելու համար: | |
|---|---|
| **Համառոտ նկարագիրը** | Պուրակը զբաղեցնում է մոտ երկու հեկտար տարածք: Այն գտնվում է Գարեգին Նժդեհի կենտրոնական փողոցից ոչ հեռու և ձգվում է դրան զուգահեռ: Պուրակը հնարավորություն ունի զարգանալ որպես քաղաքային և տեղական նշանակության հանգստի և ժամանցի գոտի:<br>Այն կարող է ձեռք բերել արդիականացված և կանաչապատման հատուկ մշակված համակարգ: Նախատեսվում է ջրի կենսաբանական մաքրման մեթոդներ կիրառելով՝ վերակառուցել տարածքի ջրային ավազանները, զարգացնել կանաչ ծածկույթի ծառատեսակների համակարգը և ապահովել տարածքի բնատեսարանի հորինվածքային միասնականությունը: Անհրաժեշտ է նախապես ստեղծել ջրավազանների և կանաչապատման աշխատանքները իրականացնող և սպասարկող միավորի (կազմակերպություն) վերազինում և անձնակազմի վերապատրաստում: |
| **Գործողության ուղղվածությունը** | Պուրակի միջավայրը բավականին անբարեկարգ է՝ սիզամարգը չի խնամվում, ճանապարհների ծածկույթը և եզրաքարերը նորոգման կարիք ունեն, ջրավազանը քայքայված է, ներկա է շինությունների ոճական և բուսականության տեսականու խայտաբղետություն: |
| **Ընդհանուր տեսլականի նպատակ** | Պատմական միջուկի մի հատվածում կիաջողվի ստեղծել թաղամաս, որը պետք է օրինակ հանդիսանա Կումայրու ամբողջ տարածքի վերակառուցման համար |

| Գործողությունների գործընթացների մանրամասները: Նպատակների և ծրագրերի մեկնաբանություն | |
|---|---|
| Նպատակը | Ստեղծել բարետես և բարեկարգված կանաչ գոտի (պուրակ), որի կանաչապատումը, ջրային մակերեսները և բարեկարգման կառույցներն ու համակարգերը առավելագույնս համապատաս- |

| | |
|---|---|
| | խանում են արդի քաղաքային տնտեսության հնարավորու-թյուններին, տարածքի կառավարման և բնակչության ներգրավման ստեղծված մեխանիզմներին: |
| Ժամկետները, առաջնահերթությունը և վտանգը | Շտապ Կարճաժամկետ Միջնաժամկետ Երկարաժամկետ<br>☐ ■ ☐ ☐<br>• **Ժամանակաշրջան: 2016 –2019 թթ**.<br>• **Վտանգ:** Պուրակում առկա կառույցների անհատ սեփականատերերի հետ իրավական հարաբերությունները կարգավորող գործող մեխանիզմների անկատարություն: |
| **Հիմնական կատարողներ** | |
| Ներգրաված հիմնական կատարողներ | Գյումրու համայնքապետարան,<br>ՀՀ մշակույթի նախարարություն |
| Մասնակցություն | Բնակիչներ, քաղաքացիական հասարակություն, տեղական ինքնակառավարման մարմինների մասնակցություն, ակտիվ խմբեր: |
| **Ֆինանսավորման աղբյուրները** | |
| Գնահատել ընդհանուր արժեքը և ֆինանսավորման աղբյուրները | |
| **Ակնկալվող արդյունքները** | |
| Արդյունքներ և ազդեցություն | Իսահակյան փողոցի պուրակը կդառնա գրավիչ տարածք՝ փոփոխելով քաղաքային միջավայրի զգալի մի հատված: Կստեղծվեն հանրային տարածքների զարգացման նոր մոտեցումներ, որոնք կհիմնվեն ժամանակակից և իրատեսական մեթոդների կիրառման վրա: |
| **Տեղեկատվական աղբյուրները** | |
| Տնօրինող կազմակերպություն(ներ) | Գյումրու համայնքապետարան |
| Տնօրինող կազմակերպություն(ներ)ի կոնտակտային տվյալներ | Հովհաննես Սահակյան, Աշոտ Միրզոյան, Ստեփան Տեր-Մարգարյան |
| Այլ փաստաթղթային աղբյուրներ | |

| | |
|---|---|
| **Լրացուցիչ նկարներ** | |










## 3.7 Գյումրի քաղաքի ելակետային պլանի գործողություն թիվ 7

Գործողության անվանումը՝

Ճիրագի (Գորկու) 17 հասցեում պատմաճարտարապետական հուշարձանի նորոգում և հարմարեցում՝ որպես արվեստագետների կացարան

| Տեղադիրքը | |
|---|---|
|  |  |

| Հիմնական նկարագիրը՝ Նախատեսվում է նորոգել պատմաճարտարապետական հուշարձան հանդիսացող կառույցը՝ որպես արվեստագետների կացարան օգտագործելու նպատակով: | |
|---|---|
| **Համառոտ նկարագիրը** | Փլուզման վտանգի տակ գտնվող հուշարձանի վիճակի կայունացում ինքնափլուզումից խուսափելու նպատակով: Տարածքի և հուշարձանի համալիր հետազոտության և վերականգնման ծրագրի կազմում: Կառույցի հարմարեցում՝ ծառայեցնելու Գյումրիում հյուրընկալվող արվեստագետների ապրելու և ստեղծագործելու նպատակին: |
| **Գործողության ուղղվածությունը** | Հուշարձանը փլուզման վտանգի տակ է: Հարավային ճակատի շարվածքի քարերը տեղաշարժված են և թափվում են հարակից մայթի վրա: Կառույցի ծայրահեղ անբավարար տեխնիկական վիճակը թույլ չի տալիս կարգավորել կից կառույցների նորմալ շահագործումը: |
| **Ընդհանուր տեսլականի նպատակ** | Քաղաքի ինքնության բացահայտում՝ հաշվի առնելով ավանդական արհեստների, հումորի, առկա մշակութային կառույցների (թանգարաններ, երաժշտական դպրոցներ և այլն), խորհրդային անցյալի, հետերկրաշարժային իրադրության և փակ սահմանի առկայությունը: |

| **Գործողությունների գործընթացների մանրամասները: Նպատակների և ծրագրերի մեկնաբանություն** |
|---|

| | |
|---|---|
| Նպատակը | Փրկել պատմական հուշարձանը վերջնական փլուզումից: Կարգավորել հետզարգացած պատմական արժեք ունեցող քաղաքային միջավայրի մի հատվածը: Նպաստել պատմական թաղամասում իրականացվող գործառույթների բազմազանությանը և քաղաքային միջավայրի հարստացմանը: |
| Ժամկետները, առաջնահերթությունը և վտանգը | Շտապ ☐ Կարճաժամկետ ☒ Միջնաժամկետ ☐ Երկարաժամկետ ☐<br>• **Ժամանակաշրջան: 2016 –2019 թթ**.<br>• **Վտանգ:** Պուրակում առկա կառույցների անհատ սեփականատերերի հետ իրավական կարգավորումների գործող մեխանիզմների անկատարություն: |
| **Հիմնական կատարողներ** | |
| Ներգրավված հիմնական կատարողներ | Գյումրու համայնքապետարան,<br>ՀՀ մշակույթի նախարարություն |
| Մասնակցություն | Բնակիչներ, քաղաքացիական հասարակություն, տեղական ինքնակառավարման մարմինների մասնակիցներ, ակտիվ խմբեր |
| **Ֆինանսավորման աղբյուրները** | |
| Գնահատել ընդհանուր արժեքը և ֆինանսավորման աղբյուրները | |
| **Ակնկալվող արդյունքները** | |
| Արդյունքներ և ազդեցություն | Կործանումից կփրկվի ժողովրդական ճարտարապետության հետաքրքիր օրինակ հանդիսացող կառույց, որը կծառայի քաղաքում հյուրընկալվող արվեստագետների և քաղաքային մշակույթի հետ կապված հետազոտողների բնակվելու և ստեղծագործական գործընթացներին: |
| **Տեղեկատվական աղբյուրները** | |
| Տնօրինող կազմակերպություն(ներ) | Գյումրու համայնքապետարան |
| Տնօրինող կազմակերպություն(ներ)ի կոնտակտային տվյալներ | Հովհաննես Սահակյան, Աշոտ Միրզոյան, Ստեփան Տեր-Մարգարյան |
| Այլ փաստաթղթային աղբյուրներ | |

| Լրացուցիչ նկարներ | |
| --- | --- |
|  |  |
|  |  |

## 3.8 Գյումրի քաղաքի ելակետային պլանի գործողություն թիվ 8

Գործողության անվանումը՝

Հաղթանակի պողոտայի պուրակի վերակառուցում






**Հիմնական նկարագիրը՝**

Վերակառուցել պուրակի բարեկարգման և կանաչապատման համակարգերը, նորոգել վթարային վիճակում գտնվող կոլեկտորը:

| | |
|---|---|
| **Համառոտ նկարագիրը** | Պուրակը գտնվում է Հաղթանակի պողոտայի միջնամասում: Այն կարևոր դեր է խաղում ամբողջ քաղաքի միջավայրի բարելավման համար: Պուրակի զարգացման, օգտագործման, խնամքի միասնական և համակարգված գործընթացի իրականացմանը էապես խանգարում է պուրակի տարածքի մի քանի վարձակալի կողմից օգտագործումը: Նախատեսվում է պուրակի կառուցվածքների (պարիսպներ, մայթեր, աստիճաններ, ջրավազաններ) վերակառուցում և կանաչ տարածքների թարմացում: Անհրաժեշտ է կազմել ծառերի (բարդիներ) փոխարինման ծրագիր, որը թույլ կտա հին ծառերի համակարգված փոխարինումը նոր տնկիներով: Պուրակի միջնամասով հոսող գետակի կոլեկտորի որոշակի հատվածներ պետք է վերանորոգվեն: Պետք է վերակառուցվեն և նորացվեն գոյություն ունեցող շատրվանները, նաև վերակառուցվեն, հետիոտնային ուղիները: Անհրաժեշտ է մշակել պարիսպների, նստարանների և լուսավորության հենասյուների միասնական հորինվածքի տեղեկատու (կատալոգ): |
| **Գործողության ուղղվածությունը** | Պուրակի կենտրոնական ճեմուղու տակով անցնող գետակի կոլեկտորը որոշ տեղերում քայքայվել և դարձել է վտանգավոր: Պուրակում աճող բարդիները անխնամ վիճակում են, իսկ դրանց հետագա խնամքը նպատակահարմար չէ: Պուրակում տեղադրված սպասարկման օբյեկտների մի մասը չի գործում: Դրանց մեծամասնությունը անվերադարձ կորցրել է գեղագիտական տեսքը և թարմությունը: |

| | |
|---|---|
| **Ընդհանուր տեսլականի նպատակ** | Պատմական միջուկի մի հատվածում հաջողվել է ստեղծել թաղամաս, որը օրինակ կհանդիսանա Կումայրու ամբողջ տարածքի վերակառուցման համար: |

| | |
|---|---|
| **Գործողությունների գործընթացների մանրամասները: Նպատակների և ծրագրերի մեկնաբանություն** | |
| Նպատակը | Ստեղծել բարետես և բարեկարգ կանաչ գոտի (պուրակ), որի կանաչապատումը, ջրային մակերեսները և բարեկարգման կառույցներն ու համակարգերը առավելագույնս համապատասխանում են արդի քաղաքային տնտեսության հնարավորություններից, տարածքի կառավարման և բնակչության ներգրավման մեխանիզմներից: |
| Ժամկետները, առաջնահերթությունը և վտանգը | Շտապ ☐ Կարճաժամկետ ■ Միջնաժամկետ ☐ Երկարաժամկետ ☐<br>• **Ժամանակաշրջան: 2016 –2019 թթ**. |
| **Հիմնական կատարողներ** | |
| Ներգրաված հիմնական կատարողներ | Գյումրու համայնքապետարան,<br>ՀՀ մշակույթի նախարարություն |
| Մասնակցություն | Բնակիչներ, քաղաքացիական հասարակություն, տեղական ինքնակառավարման մարմինների մասնակցություն, ակտիվ խմբեր |
| **Ֆինանսավորման աղբյուրները** | |
| Գնահատել ընդհանուր արժեքը և ֆինանսավորման աղբյուրները | |
| **Ակնկալվող արդյունքները** | |
| Արդյունքներ և ազդեցություն | Հաղթանակի պողոտայի պուրակը կդառնա գրավիչ տարածք՝ փոփոխելով քաղաքային միջավայրի զգալի հատվածը: Կմշակվեն հանրային տարածքների զարգացման նոր մոտեցումներ, որոնք հիմնված են ժամանակակից և իրատեսական մեթոդների կիրառման վրա: |
| **Տեղեկատվական աղբյուրները** | |
| Տնօրինող կազմակերպություն(ներ) | Գյումրու համայնքապետարան |
| Տնօրինող կազմակերպություն(ներ)ի կոնտակտային տվյալներ | Հովհաննես Սահակյան, Աշոտ Միրզոյան, Ստեփան Տեր-Մարգարյան |
| Այլ փաստաթղթային աղբյուրներ | |

**Լրացուցիչ նկարներ**













## 3.9 Գյումրի քաղաքի ելակետային պլանի գործողություն թիվ 9

Գործողության անվանումը՝

«Լիճ» հանգստի գոտի






| **Հիմնական նկարագիրը՝** Հանրային վայրերի ստեղծման նորարարական մեթոդների կիրառմամբ կվերականգնվի նախկինում գոյություն ունեցող հանգստի գոտին, որը ներկայումս գտնվում է հետզարգացման վիճակում: | |
|---|---|
| **Համառոտ նկարագիրը** | Տերյան և Տիգրանյան փողոցների հատման հարավ- արևմտյան հատվածի կառուցապատումը կիսավարտ է: Այստեղ են գտնվում արդեն չգործող ջրավազանը և շատրվանի քայքայված կոնստրուկցիաները: Նախատեսվում է վերակենդանացնել քաղաքի կարևոր հատվածներից մեկը՝ այնտեղ վերաստեղծելով ջրավազանը, կանաչապատման և բարեկարգման համակարգերը: Կիրականացվի Տերյան-Օզանյան հրապարակ-Տիգրանյան տրանսպորտային հանգույցի կանոնակարգումը, այդ թվում՝ տրանսպորտային հոսքերի կարգավորումը՝ կայանատեղերի և կանգառների տեղերի ճիշտ ընտրությամբ: |
| **Գործողության ուղղվածությունը** | Պատմական կենտրոնի կարևորագույն մի հատված անմխիթար վիճակում է: Խնամքից զուրկ այս կտորը խիստ բացասական է անդրադառնում քաղաքի ամբողջական կերպարի (իմիջի) վրա՝ ստեղծելով դեպրեսիվ ապրումներ: Տարածքին հարակից փողոցային ցանցը խնդիրներ է առաջացնում հետիոտնային և տրանսպորտային շարժման համար: |
| **Ընդհանուր տեսլականի նպատակ** | Պատմական միջուկի մի հատվածում կհաջողվի ստեղծել թաղամաս, որը պետք է օրինակ հանդիսանա Կումայրու ամբողջ տարածքի վերակառուցման համար: |

| **Գործողությունների գործընթացների մանրամասները: Նպատակների և ծրագրերի մեկնաբանություն** | |
|---|---|
| Նպատակը | Ստեղծել կարգավորված տրանսպորտային երթևեկության և կայանման համակարգ, որը ներդաշնակ է վերաստեղծված հանգստի գոտու հետ: Պատմական քաղաքի համար «մուտք» հանդիսացող հատվածը ստանում է պատշաճ գեղագիտական և ճարտարապետական որակներ: |
| Ժամկետները, առաջնահերթությունը և վտանգը | **Շտապ Կարճաժամկետ Միջնաժամկետ Երկարաժամկետ**<br>☐ ■ ☐ ☐<br>• **Ժամանակաշրջան: 2016 –2019 թթ.** |

| | |
|---|---|
| **Հիմնական կատարողներ** | |
| Ներգրավված հիմնական կատարողներ | Գյումրու համայնքապետարան,<br>ՀՀ մշակույթի նախարարություն |
| Մասնակցություն | Բնակիչներ, քաղաքացիական հասարակություն, տեղական ինքնակառավարման մարմինների մասնակցություն, ակտիվ խմբեր |
| **Ֆինանսավորման աղբյուրները** | |
| Գնահատել ընդհանուր արժեքը և ֆինանսավորման աղբյուրները | |
| **Ակնկալվող արդյունքները** | |
| Արդյունքներ և ազդեցություն | «Լիճ» կոչվող հանգստի գոտու վերականգնումը կարող է հզոր ազդակ հանդիսանալ քաղաքում հասարակական վայրերի ստեղծման համար: Կարգավորված և անվտանգ տրանսպորտային հոսքերը կնպաստեն այս տարածքի աշխուժացմանը և բազմակողմանի օգտագործմանը: |
| **Տեղեկատվական աղբյուրները** | |
| Տնօրինող կազմակերպություն(ներ) | Գյումրու համայնքապետարան |
| Տնօրինող կազմակերպություն(ներ)ի կոնտակտային տվյալներ | Հովհաննես Սահակյան, Աշոտ Միրզոյան, Ստեփան Տեր-Մարգարյան |
| Այլ փաստաթղթային աղբյուրներ | |









## 3.10 Գյումրի քաղաքի ելակետային պլանի գործողություն թիվ 10

Գործողության անվանումը՝

«Կաբարդինկա» պատմական թաղամասի զարգացում






<table>
<tr><td colspan="2">Հիմնական նկարագիրը՝<br>XIX դարում կառուցված ռազմական նշանակություն ունեցող կառույցների հարմարեցում այլ նպատակներով օգտագործման համար: Նախկին զորակայանի տարածքի նորացում և գործառական զարգացում:</td></tr>
<tr><td>Համառոտ նկարագիրը</td><td>Պատմական հուշարձան հանդիսացող 5 մասնաշենքեր (զորանոցներ և օժանդակ կառույցներ), որոնք օգտագործվում էին որպես զորակայաններ, շուտով կհանձնվեն Գյումրի համայնքին: Նշված կառույցները գտնվում են կոմպակտ և պարսպապատ տարածքի մեջ: Կառույցները բավականին լավ վիճակում են: Միջավայրը զուրկ է պատմական բնապատկերը աղավաղող կառույցներից:<br>Տարածքի մի հատվածը ճահճացած է գրունտային ջրերի բարձր մակարդակի պատճառով: Նախատեսվում է կատարել տարածքի գրունտային ջրերի հեռացում (դրենաժացում): Ջրահավաք կառույցների տեղադրման շնորհիվ կստեղծվեն պայմաններ տարածքի ոռոգման և դրանից ոչ հեռու գտնվող արհեստական լճակի ջրերի համալրման համար: Պատմական հուշարձանները կվերականգնվեն և կօգտագործվեն համալիր զարգացման ծրագրի համաձայն, որտեղ ներկայացված են կառույցների օգտագործման ձևերը, տարածքի կառավարման սկզբունքները, տեխնիկական լուծումները, կառուցապատման փուլերը, այլ տեղեկատվական և փաստաթղթային փաթեթներ: Առաջնորդվելով կառույցների և տարածքի զարգացման միասնական տեսլականով՝ պատմական շենքերը կստանան նոր գործառույթներ, կստեղծվի բարելավված և նորացված ակտիվ քաղաքային միջավայր:</td></tr>
<tr><td>Գործողության ուղղվածությունը</td><td>Մեկ տարածքի վրա կենտրոնացված պատմական արժեք ունեցող հինգ կառույցներ չունեն պահպանման և նորոգման (հարմարեցման) անհրաժեշտ ծրագրային և նյութական միջոցներ և</td></tr>
</table>

| | |
|---|---|
| | կարող են հայտնվել կործանման եզրին: Տեղում առկա աղբյուրների և ստորգետնյա ջրերի չկարգավորված հոսքերի պատճառով ճահճանում են մեծ մակերեսներ: Ոռոգման համար չեն օգտագործվում տեղում առկա ջրային պաշարները: |
| **Ընդհանուր տեսլականի նպատակ** | Պատմական միջուկի մի հատվածում կհաջողվի ստեղծել թաղամաս, որը պետք է օրինակ հանդիսանա Կումայրու ամբողջ տարածքի վերակառուցման համար: |

| **Գործողությունների գործընթացների մանրամասները: Նպատակների և ծրագրերի մեկնաբանություն** | |
|---|---|
| Նպատակը | Պատմական կառույցների նորովի օգտագործման և դրանց տարածքի վերափոխման հիման վրա կստեղծվի բացառիկ և արժեքավոր քաղաքային միջավայր: |
| Ժամկետները, առաջնահերթությունը և վտանգը | **Շտապ Կարճաժամկետ Միջնաժամկետ Երկարաժամկետ**<br>☐ ■ ☐ ☐<br>• **Ժամանակաշրջան: 2016 –2019 թթ.** |
| **Հիմնական կատարողներ** | |
| Ներգրաված հիմնական կատարողներ | Գյումրու համայնքապետարան,<br>ՀՀ մշակույթի նախարարություն |
| Մասնակցություն | Բնակիչներ, քաղաքացիական հասարակություն, տեղական ինքնակառավարման մարմինների մասնակցություն, ակտիվ խմբեր |
| **Ֆինանսավորման աղբյուրները** | |
| Գնահատել ընդհանուր արժեքը և ֆինանսավորման աղբյուրները | |
| **Ակնկալվող արդյունքները** | |
| Արդյունքներ և ազդեցություն | Նորաստեղծ «Կաբարդինկա» բազմաֆունկցիոնալ թաղամասը պատմական ժառանգության նկատմամբ կստեղծի բոլորովին նոր պատկերացումներ և կդառնա քաղաքային տնտեսության զարգացման հզոր ուժ: |
| **Տեղեկատվական աղբյուրները** | |
| Տնօրինող կազմակերպություն(ներ) | Գյումրու համայնքապետարան |
| Տնօրինող կազմակերպություն(ներ)ի կոնտակտային տվյալներ | Հովհաննես Սահակյան, Աշոտ Միրզոյան, Ստեփան Տեր-Մարգարյան |
| Այլ փաստաթղթային աղբյուրներ | |

| **Լրացուցիչ նկարներ** | |
|---|---|
|  |  |
|  |  |
|  |  |

## 3. 11 Գյումրի քաղաքի ելակետային պլանի գործողություն թիվ 11

Գործողության անվանումը՝

«Մայր Հայաստան-Սև բերդ» ռեկրեացիոն գոտու զարգացում






| **Հիմնական նկարագիրը՝**<br>Նախատեսվում է զարգացնել «Մայր Հայաստան-Սև բերդ» համաքաղաքային ռեկրեացիոն գոտին՝ ապահովելով այդ հատվածում գտնվող կառույցների և գործառույթների միջև օրգանական կապը միմյանց, ինչպես նաև դրանց հարակից քաղաքային կառուցապատման մյուս հատվածների միջև: | |
|---|---|
| **Համառոտ նկարագիրը** | «Մայր Հայաստան-Սև բերդ» ռեկրեացիոն գոտին գտնվում է քաղաքի հարավ- արևմտյան հատվածում: Այն սկսել է ձևավորվել 1960-ական թվականներին «Մայր Հայաստան» հուշակոթողի կառուցմամբ: «Մայր Հայաստան»-ը հանդիսանում է քաղաքի խոշորագույն քանդակային կոթողը: Տեղադրված լինելով բարձունքի վրա՝ այն «Սև բերդ» աշտարակի հետ միասին դարձել է Գյումրի քաղաքը բնորոշող բնապատկերներից մեկը:<br>Այստեղ իրականացվում են համաքաղաքային տոնախմբու-թյուններ հարյուրավոր մարդկանց մասնակցությամբ: Տարածքում գտնվում է արհեստական լճակ, իրականացվում են ծառատունկեր: Առաջարկվում է կազմակերպել հանգստի գոտու միջավայրի գեղագիտական և պատմական հատկանիշների բարելավում, լանդշաֆտի պահպանություն և կարգավորում, տրանսպորտային և հետիոտնային ճանապարհների վերակառուցում, կանաչապատման նորացման և ընդլայնման աշխատանքներ, հանգստի կազմակերպման ենթակառուցվածք-ների զարգացում: |
| **Գործողության ուղղվածությունը** | Քաղաքի զարգացման տարբեր ժամանակահատվածներում քաղաքային նշանակության ռեկրեացիոն գոտին կառուցապատվել է տարբեր քաղաքաշինական ծրագրերի միջոցով և տարբեր ժամանակահատվածներում: Այդ պատճառով անհրաժեշտ է մշակել տարածքի զարգացման քաղաքաշինական միասնական հայեցակարգ: |

| | |
|---|---|
| **Ընդհանուր տեսլականի նպատակ** | Պատմական միջուկի մի հատվածում հաջողվել է ստեղծել թաղամաս, որը պետք է օրինակ հանդիսանա Կումայրու ամբողջ տարածքի վերակառուցման համար: |

| | |
|---|---|
| **Գործողությունների գործընթացների մանրամասները: Նպատակների և ծրագրերի մեկնաբանություն** | |
| Նպատակը | Կանոնակարգել տարածքի զարգացման ներկայիս գործընթացը և նպաստել վերջինի երկարաժամկետ զարգացման հեռանկարին: |
| Ժամկետները, առաջնահերթությունը և վտանգը | Շտապ ☐ Կարճաժամկետ ☐ Միջնաժամկետ ■ Երկարաժամկետ ☐<br>• **Ժամանակաշրջան: 2016 –2021 թթ**.<br>• **Վտանգ:** Ֆինանսական միջոցների պակաս:<br>• Կառույցների սեփականատերերի հետ պատմական հուշարձանի զարգացման և օգտագործման ընդհանուր փոխհամաձայնեցված տեսլականի ստեղծում: |
| **Հիմնական կատարողներ** | |
| Ներգրաված հիմնական կատարողներ | Գյումրու համայնքապետարան,<br>ՀՀ մշակույթի նախարարություն |
| Մասնակցություն | Բնակիչներ, քաղաքացիական հասարակություն, տեղական ինքնակառավարման մարմինների մասնակցություն, ակտիվ խմբեր |
| **Ֆինանսավորման աղբյուրները** | |
| Գնահատել ընդհանուր արժեքը և ֆինանսավորման աղբյուրները | |
| **Ակնկալվող արդյունքները** | |
| Արդյունքներ և ազդեցություն | Կկարգավորվի քաղաքային նշանակության ռեկրեացիոն գոտու միջավայրը: Կստեղծվեն լանդշաֆտի պահպանության պայմաններ: Գոտու հատվածում տեղակայված կառույցների ներդաշնակ կապերի շնորհիվ կստեղծվի բազմապիսի և փոխկապակցված օբյեկտներով հագեցված հանգստի գոտի: |
| **Տեղեկատվական աղբյուրները** | |
| Տնօրինող կազմակերպություն(ներ) | Գյումրու համայնքապետարան |
| Տնօրինող կազմակերպություն(ներ)ի կոնտակտային տվյալներ | Հովհաննես Սահակյան, Աշոտ Միրզոյան, Ստեփան Տեր-Մարգարյան |
| Այլ փաստաթղթային աղբյուրներ | |

<table>
<tr><td>Լրացուցիչ նկարներ</td><td></td></tr>
<tr><td></td><td></td></tr>
<tr><td></td><td></td></tr>
</table>

## 3. 12 Գյումրի քաղաքի ելակետային պլանի գործողություն թիվ 12

Գործողության անվանումը՝

Գյումրի գետակի ստորգետնյա կոլեկտորի վերակառուցում






| Հիմնական նկարագիրը՝<br>Գյումրի գետակի կոլեկտորի ամրացում և մաքրում վերջին տարիներին կուտակված կենցաղային աղբից և նստվածքներից: | |
|---|---|
| **Համառոտ նկարագիրը** | Գյումրի գետակը հոսում է քաղաքի պատմական թաղամասի միջով: Այն վերցված է գետնափոր և կիսագետնափոր կոլեկտորների մեջ: 1990-ական թվականներից հետո գետակի կոլեկտորը չի նորոգվել և հատակի վրա գոյացած նստվածքից չի մաքրվել: Որպես արդյունք՝ քայքայվել են կոլեկտորի կոնստրուկցիաները, պակասել է ջրի անցանելիությունը և բարձրացել հոսքի մակարդակը: Ջրի հոսքի մակարդակի բարձրացման պատճառով բարձրանում է գետակի ավազանում գտնվող գրունտային ջրերի մակարդակը, կառույցների նկուղները լցվում են ջրով, հիմքերը և պատերը խոնավանում են:<br>Եղել են կոլեկտորի ծածկերի փլուզման դեպքեր, երբ փողոցի երթևեկելի հատվածում առաջացել են մինչև 2 մետրի հասնող փլուզումներ:<br>Նախատեսվում է իրականացնել կոլեկտորի կոնստրուկցիաների ամրացում և հունի մաքրում: Կոլեկտորի հետագա շահագործման համար ընտրվում է արդի տեխնիկական և տեխնոլոգիական համակարգ: |

| | |
|---|---|
| **Գործողության ուղղվածությունը** | Քաղաքի պատմական հատվածում առկա ջրի կոլեկտորի տեխնիկական վիճակը լիովին ստուգված չէ և կարելի է կանխատեսել, որ դրա կոնստրուկցիաների փլուզումը կշարունակվի, իսկ անցանելիությունը կպակասի՝ ստեղծելով վթարային հեղեղումների դեպքեր:<br>Գետակին հարակից տարածքների գրունտային խոնավացման պատճառով աստիճանաբար վնասվում են գրունտի վրա գտնվող կառույցների կոնստրուկցիաները: |
| **Ընդհանուր տեսլականի նպատակ** | Քաղաքում առկա գետերի մաքրում և ինտեգրում քաղաքի կանաչապատման համակարգին՝ օգտագործելով նորարարական բնապահպանական մեթոդներ: |

| **Գործողությունների գործընթացների մանրամասները: Նպատակների և ծրագրերի մեկնաբանություն** | |
|---|---|
| Նպատակը | Կարգավորել պատմական թաղամասում գտնվող ջրային կոլեկտորի տեխնիկական վիճակը և ստեղծել նմանատիպ կառուցվածքների հետագա շահագործման տեխնոլոգիական և տեխնիկական համակարգեր: |
| Ժամկետները, առաջնահերթությունը և վտանգը | Շտապ ☐ Կարճաժամկետ ■ Միջնաժամկետ ☐ Երկարաժամկետ ☐<br>• ***Ժամանակաշրջան*: 2016 –2021 թթ**. |
| **Հիմնական կատարողներ** | |
| Ներգրաված հիմնական կատարողներ | Գյումրու համայնքապետարան |
| Մասնակցություն | Բնակիչներ, քաղաքացիական հասարակություն, տեղական ինքնակառավարման մարմինների մասնակցություն, ակտիվ խմբեր |
| **Ֆինանսավորման աղբյուրները** | |
| Գնահատել ընդհանուր արժեքը և ֆինանսավորման աղբյուրները | |
| **Ակնկալվող արդյունքները** | |
| Արդյունքներ և ազդեցություն | Գյումրի գետակի կոլեկտորի կարգավորման շնորհիվ կապահովվի քաղաքի կենսա- էկոլոգիական անվտանգությունը, կբացառվեն թե՛ հեղեղների, և թե՛ շենքերի ու կառուցվածքների վնասման դեպքերը: |
| **Տեղեկատվական աղբյուրները** | |
| Տնօրինող կազմակերպություն(ներ) | Գյումրու համայնքապետարան |
| Տնօրինող կազմակերպություն(ներ)ի կոնտակտային տվյալներ | Հովհաննես Սահակյան, Աշոտ Միրզոյան, Ստեփան Տեր-Մարգարյան |
| Այլ փաստաթղթային աղբյուրներ | |

| Լրացուցիչ նկարներ | |
|---|---|
|  |  |
|  |  |
|  | |

## 3. 13 Գյումրի քաղաքի ելակետային պլանի գործողություն թիվ  13

Գործողության անվանումը

Գյումրու ճարտարապետության ուսումնասիրության կենտրոնի (ճարտարապետության թանգարան-ինստիտուտ) հիմնում






| **Հիմնական նկարագիրը՝**<br>Գյումրու քաղաքապետարանի խարսխային հարկում Գյումրու ճարտարապետության ուսումնասիրման կենտրոնի (ճարտարապետության թանգարան-ինստիտուտ) հիմնում: | |
|---|---|
| **Համառոտ նկարագիրը** | 2015 թվականին Գյումրու համայնքապետարանի կողմից հանձնարարվեց հանձնարարություն ուսումնասիրել, ներկայացնել հիմնավորումներ և կազմել ծրագիր համայնքի ճարտարապետության պատմության ուսումնասիրության կենտրոնի ստեղծման համար: Կենտրոնի նպատակն է փաստագրել, պահպանել, իրազեկել և վերաարժևորել քաղաքի ճարտարապետության պատմության և զարգացման գործընթացը: Գյումրու համայնքապետարանի խարսխային հարկում հատկացվել է մոտ 1200 քառ. մ չօգտագործվող տարածք, որը պետք է նորոգվի ճարտարապետության կենտրոնի հիմնադրման համար:<br>Կենտրոնը կազմված կլինի հետևյալ ենթաբաժանումներից.<br>• թանգարանային հատված<br>• հանդիպումների/կոնֆերանսների հատված<br>• քաղաքացիական հետազոտությունների հատված<br>• ինֆորմացիոն կենտրոն<br>• արտադրական (դիզայնի) արվեստանոց<br>• մասնագետների հյուրընկալման սենյակներ<br>• «Կումայրի» արգելոցի աշխատասենյակներ |
| **Գործողության ուղղվածությունը** | Գյումրի բնակավայրի բազմադարյան պատմությանը, զարգացմանը, կառուցապատմանը և ձևավորմանը վերաբերող տեղեկության հավաքագրմամբ և վերլուծությամբ զբաղված են բազմաթիվ մշակութային, թանգարանային և կրթական հաստատություններ, սակայն այս բոլոր կառույցների գործունեության արդյունքները մնում են առանձնացված և չկա որևէ հաստատություն, որը խնդիր կդներ միավորել այդ բազմաբնույթ տեղեկատվությունը՝ սինթեզելով այն որպես |

| | |
|---|---|
| | համալիր գիտելիք Գյումրու բնակավայրի անցյալի, ներկայի և ապագայի վերաբերյալ: |
| **Ընդհանուր տեսլականի նպատակ** | Քաղաքի ինքնության բացահայտում՝ հաշվի առնելով ավանդական արժեքների, հումորի, առկա մշակութային կառույցների (թանգարաններ, երաժշտական դպրոցներ և այլն), խորհրդային անցյալի, հետերկրաշարժային իրադրության և փակ սահմանի առկայությունը: |

| | |
|---|---|
| **Գործողությունների գործընթացների մանրամասները: Նպատակների և ծրագրերի մեկնաբանություն** | |
| Նպատակը | Ունենալ քաղաքային զարգացումները վերլուծող և պլանավորող բազմաֆունկցիոնալ կենտրոն, որը հնարավորություն կտա կազմել, կառուցել, համակարգել և իրականացնել քաղաքաշինական, ճարտարապետական, ինժեներական ծրագրեր՝ օգնելով տեղական ինքնակառավարման և տարածքային կառավարման կառույցներին՝ իրականացնելու իրենց նպատակները: |
| Ժամկետները, առաջնահերթությունը և վտանգը | Շտապ Կարճաժամկետ Միջնաժամկետ Երկարաժամկետ<br>• **Ժամանակաշրջան: 2016 –2021 թթ**.<br>• **Վտանգ:** Ֆինանսական միջոցների պակաս:<br>• Կառույցների սեփականատերերի հետ պատմական հուշարձանի զարգացման և օգտագործման ընդհանուր փոխհամաձայնեցված տեսլականի ստեղծում: |
| **Հիմնական կատարողներ** | |
| Ներգրավված հիմնական կատարողներ | Գյումրու համայնքապետարան,<br>ՀՀ մշակույթի նախարարություն,<br>ՀՀ քաղաքաշինության նախարարություն,<br>Հայաստանի ճարտարապետների միության,<br>Ճարտարպետության ազգային թանգարան-ինստիտուտ |
| Մասնակցություն | Բնակիչներ, քաղաքացիական հասարակություն, տեղական ինքնակառավարման մարմինների մասնակցություն, ակտիվ խմբեր |
| **Ֆինանսավորման աղբյուրները** | |
| Գնահատել ընդհանուր արժեքը և ֆինանսավորման աղբյուրները | |
| **Ակնկալվող արդյունքները** | |
| Արդյունքներ և ազդեցություն | Քաղաքային զարգացման գործընթացները, այդ թվում քաղաքաշինական, ճարտարապետական, տրանսպորտային, պատմական ժառանգության, բնակարանային, կանաչապատման և բնապահպանության հիմնախնդիրներն ու ծրագրերը կիրականացվեն համակարգված ձևով՝ մասնակից կողմերի նպատակների փոխշահավետության սկզբունքով: Կբարձրանա քաղաքի վարկանիշը՝ որպես ներդրումային տարածք: Քաղաքի բնակչությունը կստանա հնարավորություն՝ |

| | |
|---|---|
| | մասնակցելու քաղաքի զարգացման հիմնական ուղղությունների ընտրության և գնահատական տալու գործընթացում: |
| **Տեղեկատվական աղբյուրները** | |
| Տնօրինող կազմակերպություն(ներ) | Գյումրու համայնքապետարան |
| Տնօրինող կազմակերպություն(ներ)ի կոնտակտային տվյալներ | Հովհաննես Սահակյան, Աշոտ Միրզոյան, Ստեփան Տեր-Մարգարյան |
| Այլ փաստաթղթային աղբյուրներ | |

| **Լրացուցիչ նկարներ** | |
|---|---|
|  |  |
|  |  |

## 3.14 Գյումրի քաղաքի ելակետային պլանի գործողություն թիվ 14

Գործողության անվանումը

Ս. Մերկուրովի տուն-թանգարանի և ժողովրդական ճարտարապետության և քաղաքային կենցաղի թանգարանի տեխնիկական վերազինում և տարածքի դրենաժացում:






**Հիմնական նկարագիրը՝**
Նախատեսվում է նորացնել թանգարանների օդափոխության և ջեռուցման համակարգերը: Կառույցների հիմքերը և պատերը գերխոնավացումից պաշտպանելու նպատակով կատարել տարածքի գրունտային ջրերը իջեցնելու աշխատանքներ:

| | |
|---|---|
| **Համառոտ նկարագիրը** | Ս. Մերկուրովի տուն-թանգարանում ցուցադրվում են քանդակագործ Սերգեյ Մերկուրովի կյանքին և ստեղծագործությանը վերաբերող նմուշներ, ինչպես նաև Խորհրդային Միության քաղաքական և մշակութային հայտնի գործիչների հետմահու գիպսե դիմակները, որոնք պատրաստել է քանդակագործը: Ժող. ճարտարապետության թանգարանը, ինչպես և Մերկուրովի թանգարանը, համարվում է պատմական ժառանգության բարձրարժեք նմուշ, ներկայացնում է Գյումրի-Ալեքսանդրապոլի ժողովրդական ճարտարապետությունը, կենցաղը, մշակույթը և ավանդույթները: Երկու օբյեկտները գտնվում են կողք կողքի և տեղակայված են ստորգետնյա բարձր մակարդակ ունեցող գրունտների վրա: Տարածքի գրունտային ջրերի բարձր մակարդակի պատճառ կարող է հանդիսանալ մոտիկ հոսող գետակը: Պատճառ կարող է հանդիսանալ նաև XIX դարում կառուցված ջրամատակարարման ցանցի խափանումը: Նշված ցանցը, որն անվանվում է «քյարիզներ»(պարսկերեն՝ Qanat կամ Karez), միջնադարից եկած բնակավայրերը ջրով սնուցելու ավանդույթ է, քիչ է ուսումնասիրված: 1950-ական թվականներից սկսած, նոր ջրամատակարարման և ջրահեռացման ցանցերը տեղադրելու ժամանակ, քյարիզների համակարգն անտեսվել է և ենթարկվել է տարերային քայքայման: Ներկա դրությամբ այդ հանգամանքը պատճառ է դարձել կառույցների և ճանապարհների տակի գրունտերի անսպասելի փլուզումների, կառույցների խոնավացման, սահքերի և այլ տիպի վթարների համար: Անհրաժեշտ է կատարել |

| | |
|---|---|
| | տեղանքի հիդրոլոգիական ուսումնասիրություն և ինժեներական միջոցառումներ գրունտային ջրերի մակարդակը իջեցնելու և գրունտները կայունացնելու համար: Օբյեկտների օդափոխության և ջեռուցման համակարգերը չեն համապատասխանում թանգարանի գործառույթներին և կարիք ունեն վերափոխման: |
| **Գործողության ուղղվածությունը** | Տեղանքի գրունտային ջրերի բարձրացման և տեխնիկապես հնացած օդափոխության և ջեռուցման համակարգերի պատճառով թանգարանների գործունեությունը լիարժեք չէ, և անհնարին է դառնում նմուշների պատշաճ պահպանումը: |
| **Ընդհանուր տեսլականի նպատակ** | Քաղաքի ինքնության բացահայտում՝ հաշվի առնելով ավանդական արհեստների, հումորի, առկա մշակութային կառույցների (թանգարաններ, երաժշտական դպրոցներ և այլն), խորհրդային անցյալի, հետերկրաշարժային իրադրության և փակ սահմանի առկայությունը: |

| | |
|---|---|
| **Գործողությունների գործընթացների մանրամասները: Նպատակների և ծրագրերի մեկնաբանություն** | |
| Նպատակը | Փրկել ֆիզիկական քայքայումից թանգարանների շինությունները և ցուցադրվող նմուշները: |
| Ժամկետները, առաջնահերթությունը և վտանգը | Շտապ ☐ Կարճաժամկետ ■ Միջնաժամկետ ☐ Երկարաժամկետ ☐<br>• **Ժամանակաշրջան: 2016 –2021 թթ.** |
| **Հիմնական կատարողներ** | |
| Ներգրաված հիմնական կատարողներ | Գյումրու համայնքապետարան,<br>ՀՀ մշակույթի նախարարություն |
| Մասնակցություն | Բնակիչներ, քաղաքացիական հասարակություն, տեղական ինքնակառավարման մարմինների մասնակցություն, ակտիվ խմբեր |
| **Ֆինանսավորման աղբյուրները** | |
| Գնահատել ընդհանուր արժեքը և ֆինանսավորման աղբյուրները | |
| **Ակնկալվող արդյունքները** | |
| Արդյունքներ և ազդեցություն | Գերխոնավացումից կպաշտպանվեն երկու բարձրարժեք պատմա-ճարտարապետական հուշարձանների շինությունները: Ներքին միկրոկլիմայի կարգավորման շնորհիվ կպահպանվեն բացառիկ կարևորության ցուցադրանյութերը: |
| **Տեղեկատվական աղբյուրները** | |
| Տնօրինող կազմակերպություն(ներ) | Գյումրու համայնքապետարան |
| Տնօրինող կազմակերպություն(ներ)ի կոնտակտային տվյալներ | Հովհաննես Սահակյան, Աշոտ Միրզոյան, Ստեփան Տեր-Մարգարյան |

| | |
|---|---|
| Այլ փաստաթղթային աղբյուրներ | |

| **Լրացուցիչ նկարներ** | |
|---|---|
|  |  |
|  |  |
|  | |

## 3. 15 Գյումրի քաղաքի ելակետային պլանի գործողություն թիվ 15

Գործողության անվանումը՝

«Գրքերի տուն» հասարակական տարածքի զարգացում






| **Հիմնական նկարագիրը՝**<br>Նախատեսվում է ստեղծել (վերաստեղծել) կենտրոնական հրապարակի հարևանությամբ գտնվող հանգստի գոտին: | |
|---|---|
| **Համառոտ նկարագիրը** | Տարածքը ազատ է որևէ կառուցապատումից: Դրա մի մասում գտնվում է հուշարձան-աղբյուր: Այդ հատվածը բարեկարգ է: Մյուս մասը անբարեկարգ է և չի օգտագործվում պատշաճ ձևով: Տարածքը արևմուտքից սահմանափակված է պատմական հուշարձան հանդիսացող երկհարկանի կառույցով, որտեղ ապրել է հայ նշանավոր կոմպոզիտոր Արմեն Տիգրանյանը: Մինչև Սպիտակի երկրաշարժը այս տարածքում գտնվել է բազմաբնակարան շենք, որի առաջին հարկում տեղակայված է եղել «Գրքերի տուն» գրախանութը: Ենթադրվում է կազմել նշված տարածքի զարգացման ծրագիր և նախագիծ, որի համաձայն՝ կիրականացվի հասարակական վայրի (հանգստի գոտու) կառուցապատումը: |
| **Գործողության ուղղվածությունը** | Քաղաքի կենտրոնական հրապարակի հարևանությամբ տեղակայված է կառուցապատումից և բարեկարգումից դուրս մնացած տարածք, որը կարիք ունի բարեկարգման և կանաչապատման: |
| **Ընդհանուր տեսլականի նպատակ** | Քաղաքի ինքնության բացահայտում՝ հաշվի առնելով ավանդական արհեստների, հումորի, առկա մշակութային կառույցների (թանգարաններ, երաժշտական դպրոցներ և այլն), խորհրդային անցյալի, ետերկրաշարժային իրադրության և փակ սահմանի առկայությունը: |

| **Գործողությունների գործընթացների մանրամասները: Նպատակների և ծրագրերի մեկնաբանություն** | |
|---|---|
| Նպատակը | Կարգավորել կառուցապատումից (կանաչապատումից, բարեկարգումից) դուրս մնացած հողակտոր, որը կարող է զարգանալ որպես հասարակական վայր (հանգստի գոտի)՝ |

| | |
|---|---|
| | նպաստելով քաղաքային տարածքների նորացմանը, քաղաքացիների կողմից դրանց ակտիվ օգտագործմանը: |
| Ժամկետները, առաջնահերթությունը և վտանգը | Շտապ Կարճաժամկետ Միջնաժամկետ Երկարաժամկետ<br>☐ ■ ☐ ☐<br>• **Ժամանակաշրջան: 2016 –2021 թթ**.<br>• **Վտանգ:** Ֆինանսական միջոցների պակաս:<br>• Կառույցների սեփականատերերի հետ պատմական հուշարձանի զարգացման և օգտագործման ընդհանուր փոխհամաձայնեցված տեսլականի ստեղծում: |
| **Հիմնական կատարողներ** | |
| Ներգրաված հիմնական կատարողներ | Գյումրու համայնքապետարան,<br>ՀՀ մշակույթի նախարարություն |
| Մասնակցություն | Բնակիչներ, քաղաքացիական հասարակություն, տեղական ինքնակառավարման մարմինների մասնակցություն, ակտիվ խմբեր |
| **Ֆինանսավորման աղբյուրները** | |
| Գնահատել ընդհանուր արժեքը և ֆինանսավորման աղբյուրները | |
| **Ակնկալվող արդյունքները** | |
| Արդյունքներ և ազդեցություն | Կստեղծվի հանգստյան գոտի, որտեղ իրենց հանգիստը կկազմակերպեն քաղաքի բնակիչները և զբոսաշրջիկները: |
| **Տեղեկատվական աղբյուրները** | |
| Տնօրինող կազմակերպություն(ներ) | Գյումրու համայնքապետարան |
| Տնօրինող կազմակերպություն(ներ)ի կոնտակտային տվյալներ | Հովհաննես Սահակյան, Աշոտ Միրզոյան, Ստեփան Տեր-Մարգարյան |
| Այլ փաստաթղթային աղբյուրներ | |

| | |
|---|---|
| **Լրացուցիչ նկարներ** | |





## 3. 16 Գյումրի քաղաքի ելակետային պլանի գործողություն թիվ 16

Գործողության անվանումը՝

Գորկու 22 հասցեում բնակելի տան ներքին բակի և բակային ճակատների վերակառուցում






| | |
|---|---|
| **Հիմնական նկարագիրը՝**<br>Նախատեսվում է վերակառուցել ներքին բակ ունեցող պատմական շենքի ներքին ճակատների կոնստրուկցիաները և բակի հարդարումը, կանոնավորել արտաքին ճակատների վրա տեղադրված գովազդները: | |
| **Համառոտ նկարագիրը** | Գորկու 22 հասցեով բազմաբնակարան բնակելի շենքը հանդիսանում է քաղաքի պատմական ժառանգության յուրա-հատուկ օրինակներից մեկը: Կառույցի ներքին բակը և բակային ճակատների վրա տեղադրված փայտյա պատշգամբները ստեղծում են պատմա- ճարտարապետական գրավիչ համալիր, որը վերակառուցման դեպքում կարող է դառնալ բարձրարժեք քաղաքային միջավայր:<br>Կառույցի առաջին հարկի մի հատվածում տեղակայված են սպասարկման օբյեկտներ (լուսանկարչատուն (չգործող), հացի արտադրություն և վաճառք, սննդի օբյեկտ): Վերջիններիս ցուցափեղկերը և գովազդային վահանակները տարաբնույթ են և չունեն ընդհանուր ոճային համակարգ:<br>Ենթադրվում է կատարել շենքի ներքին բակի հետ կապված վերակառուցման և փողոցային ճակատների վրա տեղադրված գովազդային վահանակների վերաձևավորման աշխատանքներ, որոնք զգալիորեն կփոխեն քաղաքային հյուսվածքի որակական նկարագիրը: |
| **Գործողության ուղղվածությունը** | Բնակելի շենքի պատմականորեն ձևավորված ներքին (ատրիումային) բակի շինությունները խնամքի բացակայության պատճառով քայքայված են և վտանգավոր օգտագործման համար: Համալիրի արտաքին ճակատների նշանային համակարգը չունի փոխկապակցված ոճային ընդհանրություն և այդ պատճառով խայտաբղետ է և ցածրորակ: |

| | |
|---|---|
| **Ընդհանուր տեսլականի նպատակ** | Քաղաքի ինքնության բացահայտում՝ հաշվի առնելով ավանդական արհեստների, հումորի, առկա մշակութային կառույցների (թանգարաններ, երաժշտական դպրոցներ և այլն), խորհրդային անցյալի, հետերկրաշարժային իրադրության և փակ սահմանի առկայությունը: |

| **Գործողությունների գործընթացների մանրամասները: Նպատակների և ծրագրերի մեկնաբանություն** | |
|---|---|
| Նպատակը | Վերականգնել և նորովի զարգացնել պատմական արժեք ունեցող քաղաքային միջավայրի մի հատված՝ այն վերակառուցելու և անցանկալի կցակառույցներից մաքրելու միջոցով: Քաղաքային դիզայնի նոր ձևերի կիրառման շնորհիվ ստեղծել նորացված և ներդաշնակ ճարտարապետական միջավայր: |
| Ժամկետները, առաջնահերթությունը և վտանգը | Շտապ ☐ Կարճաժամկետ ■ Միջնաժամկետ ☐ Երկարաժամկետ ☐<br>• **Ժամանակաշրջան: 2016 –2021 թթ**.<br>• **Վտանգ:** Ֆինանսական միջոցների պակաս:<br>• Կառույցների սեփականատերերի հետ պատմական հուշարձանի զարգացման և օգտագործման ընդհանուր փոխհամաձայնեցված տեսլականի ստեղծում: |
| **Հիմնական կատարողներ** | |
| Ներգրաված հիմնական կատարողներ | Գյումրու համայնքապետարան,<br>ՀՀ մշակույթի նախարարություն |
| Մասնակցություն | Բնակիչներ, քաղաքացիական հասարակություն, տեղական ինքնակառավարման մարմինների մասնակցություն, ակտիվ խմբեր |
| **Ֆինանսավորման աղբյուրները** | |
| Գնահատել ընդհանուր արժեքը և ֆինանսավորման աղբյուրները | |
| **Ակնկալվող արդյունքները** | |
| Արդյունքներ և ազդեցություն | Կպահպանվի հուշարձան շինությունը և նրան հարակից տարածքը՝ ստեղծելով ներդաշնակ ճարտարապետական միջավայր: |
| **Տեղեկատվական աղբյուրները** | |
| Տնօրինող կազմակերպություն(ներ) | Գյումրու համայնքապետարան |
| Տնօրինող կազմակերպություն(ներ)ի կոնտակտային տվյալներ | Հովհաննես Սահակյան, Աշոտ Միրզոյան, Ստեփան Տեր-Մարգարյան |
| Այլ փաստաթղթային աղբյուրներ | |

| **Լրացուցիչ նկարներ** | |
|---|---|









## 3. 17 Գյումրի քաղաքի ելակետային պլանի գործողություն թիվ 17

Գործողության անվանումը

Գյումրու կենտրոնական հրապարակի (Վարդանանց հրապարակ) կանաչապատման և փողոցային լուսավորության արդիականացում






| | |
|---|---|
| **Հիմնական նկարագիրը`** Գյումրու կենտրոնական հրապարակի գրավչությունը բարձրացնելու նպատակով առաջարկվում է կատարել կանաչապատման (հատկապես ծառերի) և լուսավորության համակարգերի արդիականացում: | |
| **Համառոտ նկարագիրը** | Հրապարակում աճող ծառերի մեծամասնությունը սոճի է: Ծառի այս տեսակն առաջացնում է մեծ սաղարթ, որն աճելու ընթացքում ստանում է անկանոն ձև, փակում մոտակա շենքերի ճակատները և չի ենթարկվում մշակման էտելու (ճյուղերը կտրատելու) միջոցով:<br>Գոյություն ունեցող լուսավորության սյուների մի մասը տեղադրված է եղել 70-ական թվականներին և բարոյապես ու ֆիզիկապես հնացած է: |
| **Գործողության ուղղվածությունը** | Գյումրի քաղաքի գլխավոր հրապարակը, որը տեղակայված է «Կումայրի» արգելոց-թանգարանի կենտրոնում, կարիք ունի արդիականացման: Հրապարակի կանաչապատման և արտաքին լուսավորության տարրերը այլևս չեն համապատասխանում արդի տեխնիկական և գեղագիտական պահանջներին: |
| **Ընդհանուր տեսլականի նպատակ** | Քաղաքի ինքնության բացահայտում հաշվի առնելով ավանդական արհեստների, հումորի, առկա մշակութային կառույցների(թանգարաններ, երաժշտական դպրոցներ և այլն), խորհրդային անցյալի, հետերկրաշարժային իրադրության և փակ սահմանի առկայությունը: |

| |
|---|
| **Գործողությունների գործընթացների մանրամասները: Նպատակների և ծրագրերի մեկնաբանություն** |

| | |
|---|---|
| Նպատակը | Բարելավել կենտրոնական հրապարակի կանաչապատման և արտաքին լուսավորության համակարգերը: |
| Ժամկետները, առաջնահերթությունը և վտանգը | Շտապ Կարճաժամկետ Միջնաժամկետ Երկարաժամկետ<br>• **Ժամանակաշրջան: 2016 –2021 թթ**. |
| **Հիմնական կատարողներ** | |
| Ներգրաված հիմնական կատարողներ | Գյումրու համայնքապետարան,<br>ՀՀ մշակույթի նախարարություն |
| Մասնակցություն | Բնակիչներ, քաղաքացիական հասարակություն, տեղական ինքնակառավարման մարմինների մասնակցություն, ակտիվ խմբեր |
| **Ֆինանսավորման աղբյուրները** | |
| Գնահատել ընդհանուր արժեքը և ֆինանսավորման աղբյուրները | |
| **Ակնկալվող արդյունքները** | |
| Արդյունքներ և ազդեցություն | Պատմական քաղաքի նշանակալի հասարակական վայրերից մեկը կստանա նոր, ժամանակակից հատկանիշներ: Շնորհիվ այս գործողության քաղաքի հարդարման խնդիրներով զբաղվող կառույցները և անհատ անձինք կստանան նման խնդիրներն իրականացնելու համար նոր գիտելիքներ և փորձ: |
| **Տեղեկատվական աղբյուրները** | |
| Տնօրինող կազմակերպություն(ներ) | Գյումրու համայնքապետարան |
| Տնօրինող կազմակերպություն(ներ)ի կոնտակտային տվյալներ | Հովհաննես Սահակյան, Աշոտ Միրզոյան, Ստեփան Տեր-Մարգարյան |
| Այլ փաստաթղթային աղբյուրներ | |

| **Լրացուցիչ նկարներ** | |
|---|---|
|  |  |
|  |  |
|  |  |
|  | |